

ԳՈՒԼՔԱՆՅԱՆ Վ.

ՑՈՐԵՆԻ ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ

ԽԱՉԱՉԵՎՈՒՄԸ



633
Գ.-86

04 AUG 2010

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
БИОЛОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ—СЕКТОР ГЕНЕТИКИ РАСТЕНИЙ

ԽՈՍՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԲԻՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ՍԵԿՏՐ

ГУЛКАНЯН В.

633
9-86 *պ*
ԳՈՒՎՔԱՆՅԱՆ Վ.

ВНУТРИСОРТОВОЕ
СКРЕЩИВАНИЕ
ПШЕНИЦЫ

Ց Ո Ր Ե Ն Ի
Ն Ե Ր Ս ՈՐ Տ Ա Յ Ի Ն
Խ Ա Չ Ա Չ Ե Վ Ո Ւ Մ Ը



ՀՈՐԵ
ԲԵ

ИЗДАНИЕ АРМФАН
ЕРЕВАН 1989

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐՄՅԱՆԻ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1989

27.03.2013

18288

ՏՐԱՎԱԳՐՎՈՒՄ Ե

ԽԱՅՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱՎԱՆ ԳԻՒԼԱՎ

ԿԱՆԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՍԱՍԲ

Նախագահի տեղակալ՝ Ո. ԿԱՐԱՊԵ



3954
39

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ԽՈՂՑ՝ Կրթութիւնների Ազգային Հայեցողական Ծիրխայր
տված գիտական աշխատող ընկ. Վ. Ռ. Գուլբանյանի այս աշխա-
տութիւնը՝ ցորենի ներսորտային խաչածնման մասին, հանդի-
տանում է առաջինն այն սերիայի աշխատութիւնների մեջ, զոր-
քը Բհարդիական Խնամարարի բույսերի գենետիկայի սեկտորը
զեղած է հրատարակի մեր կոլանսեսութիւնների, գյուղատնտե-
սների, Խրճիթ-լարբարատրիաների աշխատողների և բրիգադա-
վարների համար

Ազգատնտեսների այդ շարքին են պատկանում նա՝
հրատարակութեան համար պատրաստվող այնպիսի բրայուրներ
ինչպիսիք են՝ «Ցորենի մասնայական ընտրութիւնը», «Կարթո-
ֆիլի ամառային ցանքը» և այլն:

Սերիայի հրատարակութեան նպատակն է՝ զինել մեր գյու-
ղատնտեսներին, կոլանսեսական փորձագետներին և Խրճիթ-լա-
րբարատրիայի աշխատողներին առաջվոր գյուղատնտեսական
գիտութեան նվաճումներով, ոգնել նրանց այն կարևոր գիտա-
նապատեանական աշխատանքներում, զոր նրանք կատարում են
բույսերի բերքատուութիւնը բարձրացնելու և բարձր բերքա-
տուութեան ունեցող սերմացու ստանալու ուղղութեամբ:

Ընկ. Վ. Ռ. Գուլբանյանի գիրքը մտալիւ ձևով շարա-
դրում է բույսերի բնագիտական բնութագրի և նախաքեր յեր-
մալիւնը և օտարեցնում է ընթերցողին, թէ ինչպէս աշխատել
ցորենի սերմացույի բերքատուութիւնը բարձրացնելու համար,
ոչառարարձեղ ապագեմիկ Տ. Գ. Արանկայի կողմից մշակված բույ-
սերի ներսորտային խաչածնման պրիմը:

Չեայած զոր գիրքը նվիրված է ցորենի սերմացույի բեր-
քատուութեան բարձրացման միջոցներից մեկի՝ ներսորտային խա-

չաձևման մանրամասն նկարագրմանը, այնուամենայնիվ զբոլում շուտիվով ինդիկներն շարագրությունն այնքան բազմակողմանի չէ, ժոր ուշագիր ընթերցողը կարող է շատ դիտելիքներ ձեռք բերել նրանից:

Սերմնաբուծությունը խրճիթ-լաբորատորիաների աշխատողներին և կոլտնտեսական փորձագետներին աշխատանքի կարևոր բնագավառն է հանդիսանում:

Մենք մի գյուղատնտես, խրճիթ-լաբորատորիայի աշխատող և կոլտնտեսական փորձագետ պետք է հիշել, վրս սերմնաբուծական աշխատանքի մեջ ամենալիցիտավորը—դա բարձր ագրուսիանիսիկան է և անընդհատ ընտրությունը:

Սերմնացույցի համար ընտրել ամենաբերքատու ցանքը, այդ լավ ցանքից ընտրել լավագույն բույսերը, լավագույն բույսերից ընտրել ամենալավ հասկերը և ամենալավ հասկերից՝ լավագույն հատիկները, ապա ստացված սերմերը ցանել լավ մշակված հողում—անա վրն է թե սերմացույցի բերքատվության բարձրացման և թե ընտրության միջոցով նոր բերքատու սորտեր ստեղծելու ամենաճիշտ ճանապարհը. այդ ճանապարհով պետք է գնան մեր խրճիթ-լաբորատորիաների աշխատողները և կոլտնտեսական փորձագետները՝ բարձրորակ սերմացու ստանալու համար:

Լավ մշակել բույսերը, նրանց նկատմամբ զործադրել դիտության կողմից տրված պրիոնները, այդ թվում նաև ներսորտային խաչաձևման պրիոնը և անընդհատ ընտրել, միշտ ընտրել լավը, թողնելով վատը—սա յե սերմացույցի աղնվացման, նրա բերքատվության բարձրացման ստուգված յեղանակը:

Ցորենի ներսորտային խաչաձևումը լավագույն միջոցներից մեկն է մեր սերմացուն թարմացնելու, նրա բերքատվությունը բարձրացնելու համար:

Կուսակցությունը և կառավարությունը մեծ կարևորություն են տալիս ցորենի ներսորտային խաչաձևման աշխատանքներին: Մերմնաբուծությունը կազմակերպելու և հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու միջոցառումների մասին» Հայկական ԽՍՀ ժողովուրդի և ՀԿ(Ե)Կ Կենտկոմի 1939թ. փետրվարի 3-ի վորոշման մեջ պատված է.

«Բերհասվարյան բարձրացման յեվ սերմերի վառակի բարեղավման գործում բացառիկ կարևոր նշանակություն

տալով ներսորտային խաչաձևվածքը, տրասպորտային և կարևորագույն ԽՍՀ Հող ժողովուրդին 1939 թվին կազմակերպելու աշխատանքում յեվ զարմանացան ցորենների ներսորտային խաչաձևվում տունվազը 400 կոլեկտիվայիններում:

Այդ վորոշման մեջ ասվում է նաև, ժոր ներսորտային խաչաձևումը պետք է կատարել կոլտնտեսություններին բերքատվությամբ բարձր ցանցերում, բույսերի անհատական ընտրությամբ:

Հազարավոր կոլտնտեսականներ՝ գյուղատնտեսների, երբեք չեն խրճիթ-լաբորատորիայի աշխատողների և կոլտնտեսական փորձագետների հետ միասին կատարելու յեն ցորենի ներսորտային խաչաձևման աշխատանքը:

Հասկանալի յե այն մեծ պահանջը, վոր արդեն գյուղացուսին համապատասխան զբաղանության վերաբերյալ:

Ներսորտային խաչաձևման, ինչպես և ընդհանրապես բույսերի բերքատվորման բիրտղիայի վերաբերյալ հայերեն զբաղանություն կոլտնտեսական ակտիվի համար դեռ չկա. ընդհանրապես Խ. Գուլյանյանի այս աշխատության հրատարակումով ԽՍՀ Գյուղատնտեսների Արտոնագրային Հայկական Ծիլիսը ձեռնամուխ է լինում այդպիսի զբաղանության ստեղծմանը:

ԲՆՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՎԻՍՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՔԵԿԻՄԱԾՈՒ՝

Գ. ԲՈՒՅՈՒՄՆԱՆՍԻ:

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՐԵՆԻ ԲՈՒՅՍԻ
ՄԱՍԻՆ

Պորճրդային խոշորագույն գիտնական, ակադեմիկ
Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն 1935 թվին առաջարկեց
մի միջոց, վորը բարձրացնում է մի շարք բույսերի
բերքատվության հատկութունը: Այդ միջոցը բույսե-
րի ներսորտային խաչաձեւումն է, վորն ահա ջանի
աարի յե կատարվում է դանազան բույսերի վրա, ա-
ստային հերթին ցորենի վրա, և տարիս է հրաշարի
արդյունքներ:

Ակադեմիկ Լիսենկոյի առաջարկը՝ ներսորտային
խաչաձեւման մասին, ունի խոշոր գիտական հիմք,
չատ պարզ իմաստ, վորի մասին մի քիչ հետո կխո-
սենք, իսկ այժմ տանք մի ջանի անհրաժեշտ տեղեկու-
թյուններ վորոշ բույսերի, այդ թվում նաև ցորենի
մասին:

Բնության մեջ յեզոզ բույսերի մեծամասնությու-
նը, այդ թվում նաև գյուղատնտեսության մեջ
մշակվող բույսերը, կտրող են բազմանալ ու բազմա-
նում են սեռական ճանտպարհով: Բույսերն ևս, կեն-
դանիների պէս, ունեն արական ու իգական օրգաններ:

Բույսերի սեռական օրգանները տեղափոխված են
ծաղիկների մեջ:

Բույսի իգական օրգանը կազմում է վարսանդ, վորի
ներքեվի մասում գտնվում է սերմնարանը,

խակ վերելի մասում՝ սպին: Սերմնադրանում՝ գտնվում են մեկ կամ մի քանի սերմնասաղմեր, վորոնցից ամեն մեկի մեջ լինում է մեկ ձվաբջիջ: Ահա այս ձվաբջիջներն են, վորոնք բեղմնավորվելով ծաղկափոշով, տալիս են սերմ:

Բույսի արական որդանը կոչվում է առեչք, վորի մեջ պարզանում ու հասունանում է ծաղկափոշին: Ծաղկափոշին տարածվելով քամու կամ միջատների միջոցով, ընկնում է վարսանդի սպիտ վրա, ծլում է ու հասնելով ձվաբջիջին, բեղմնավորում է նրան:

Մովորարար առանց բեղմնավորության սերմ չի ստացվում:


Կան բույսեր, վորոնց միևնույն ծաղիկներն ունեն թե՛ արական և թե՛ իգական որգաններ: Այսպիսի բույսեր են՝ ցորենը, գարին, վարսակը, աշորան, արեվածաղիկը, վորլը, խաղողը, ծիրանը և այլն: Մրանք կոչվում են յերկսեռ բույսեր:

Կան այնպիսի բույսեր, վորոնց ծաղիկների մի մասն ունի միայն արական որգան, իսկ մյուսը՝ միայն իգական: Այսպիսի բույսեր են՝ յեղիպտացորենը, կաղնին, ընկուզենին, ձմերուկը, վարունգը և այլն: Մրանք կոչվում են միատուն բույսեր:

Կան նաև այնպիսի բույսեր, վորոնց բոլոր ծաղիկներն ունեն կամ միայն արական, կամ միայն իգական որգաններ: Այդպիսի բույսեր են՝ կանեփը, սոճին, թթենին, ուռնու շատ տեսակները և այլն: Մրանք էլ կոչվում են յերկատուն բույսեր:

Բանի վոր այս գրքույկը նվիրված է ցորենի ներստառային խաչաձևման հարցին, ապա պետք է մի քանի տեղեկութուն տանք հատկապես ցորենի բույսի ու առանձնապես նրա հասկի վերաբերյալ:

Ցորենի բույսը թփանման է: Նա ունի փնջածևի արմատ (նկ. 1): Ցորենի բույսը բաղկացած է ցորենի-



Նկ. 1 ցորենի բույսը թփանման է: Նա ունի փնջածև արմատ


սերից, վորոնց թիվը լինում է ա.արբեր, նայած թե՛ ի՞նչ տեսակի, ի՞նչ սորաի ցորեն է և ի՞նչ պայմաններում է աճում: Ուժեղ սնունդ տալու դեպքում, որքանակ, լայնաչաքը ցանքի պայմաններում, լավ պաշտպանությամբ հողում, ցորենի թուփը կարող է բաղկացած լինել մինչև 100 և է՛լ ավելի ցողունից:

Պետք է ասել, վոր ցորենի բույսի բոլոր ցողուններն ու հասկերը լավ պարզացած չեն լինում: Գրանց թվին են պատկանում, որինակ, բեջաները: Միշտ պետք է նկատի առնել, վոր այդ թույլ հասկերը տալիս են թույլ, վոչ լիարժեք սերմեր:

Ամենալավ սերմերն ստացվում են ամենալավ, ուժեղ ու փարթամ հասկերից:

Յորենի տերեւը բաղկացած է յերկու մասից, վա-
րանցից մեկը փաթաթված է լինում ցողունին, իսկ
մյուսն ազատ է: Տերեւի այն մասը, վորը փաթաթված
է ցողունին, կոչվում է տերեւաբուն, իսկ ազատ մա-
սը կոչվում է տերեւի թիթեզ (նկ. 2):

Յորենի հասկը բաղկացած է առանձին հասկիկներից:



Նկ. 2. Յորենի տերեւաբունը և թիթեզը. ա. Տերեւաբունը.
բ. Տերեւի թիթեզը:

Հասկիկները կպած են հասկի կոթունի ծնկիկնե-
րի վրա (նկ. 3): Հասկի հիմքում գտնվող 2-3 հաս-
կիկները սովորաբար թույլ ու նվազ են լինում: Թույլ
ու նվազ են լինում նաև հասկի ծայրին գտնվող 2-3
հասկիկները: Միջտեղառի պիտի առնել, վոր այդ թույլ
հասկիկները առլիս են թույլ սերմեր, իսկ ամենափաթ-
թած, ամենալավ հասկիկները առլիս են լավ, խոշոր,

լիարժեք սերմեր:
Հասկիկը (նկ. 3) բաղկացած է 1-ից մինչև 5 ե




Նկ. 3. Հասկի կոթունը և հասկիկները. ա. Հասկիկ, բ. կոթունը:

ուսկից ծաղիկը, վորոնք կպած են հասկիկի կոթու-
նին: Այդ ծաղիկներից յուրաքանչյուրը կարող է տալ
հաստիկ, յեթե հաջող կերպով բեղմնավորվի:

Բայց նկատի պետք է առնել, վոր զարգացած հա-
տիկներ, տալիս են հասկիկի այն ծաղիկները, վորոնք
գտնվում են նրա դրսի կողմերում: Հասկիկի
ներքի կողմում գտնվող ծաղիկները թույլ են և
տալիս են թույլ, համեմատաբար մանր հատիկներ:

Ներսորտային խաչաձևում կատարելու համար ան-
հրաժեշտ է լավ ուսումնասիրել հատիկի և նրա մեջ
գտնվող ծաղիկների կազմությունը:

Յորենի յուրաքանչյուր հասկիկ էր յերկու կողմից
առնի մեկական թեփուկ: Այս թեփուկները կոչվում են




Նկ. 4. Յորենի ծաղիկը: ա. Մաղկային ներքին թեփուկ, բ. Մաղ-
կային արտաքին թեփուկ. գ. Առեչներ. դ. Առեչի թեփուկ:

հասկիկային թեփուկներ: Ահա այդ հասկիկային յեր-
կու թեփուկի մեջ են գտնվող ծաղիկները, վո-
րոնց թիվը, ինչպես ասացինք, լինում է 1-ից մինչև 5
և այլևի:

Յորենի ծաղիկը (նկ. 4) ունի յերկու թեփուկ, վո-
րոնցից դրսինը կոչվում է ծաղկային արտաքին թե-
փուկ, և ներսինը՝ ծաղկային ներքին թեփուկ:
Մաղկային թեփուկների արանքում տեղավորված են
վարսանդը և առեչները (նկ. 4):

Յորենի առեչների թիվը յերեք է: Յորենի վար-
սանդի (նկ. 5) ներքեվի մասում գտնվում է սերմնա-
բանը, իսկ վերեվի մասում՝ սպին: Յերբ ծաղիկը լավ
հասունանում է, սպին բացվում է և ստանում փե-
տուրի ձև:

Յորենի առեչները (նկ. 4 և 5) կպած են ծաղիկ



Նկ. 5. Յորենի սեռական որգանները: ա. Առեչ, բ. Սպի
գ. Սերմնարան, դ. Վարսանդ, յ. Առեչի թեփուկ:

հիմքին շատ բարակ և նուրբ թելերով և յերբ պինդե-
տով բռնում ենք առեչներն ու ձգում, նրանք շատ
հեշտուրթյամբ պոկվում են:

Առեչների մեջ պատրաստվում է ծաղկավորչին:
Գետք է լավ ճանաչել խակ և հասունացած առեչնե-

ըր. իսկ առեջներն ունենում են կանաչ դույն, իսկ հասունացած առեջները լինում են դեղին դույնի: Յերբ առեջները բարձրովին հասունանում են, նրանք պատուվում են և նրանց միջից թափվում է ծաղկափողին ու բեղմնավորում վարսանդը:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, ցորենն այսպիսի բույս է, վորի միևնույն ծաղկի մեջ միաժամանակ տեղափոխված են թե՛ արական և թե՛ իգական օրգանները:

Վերջվում ասացինք, վոր սեռական օրգաններ ունենալու ձևի հիման վրա բույսերը բաժանվում են յերեք խմբի: Իրանք հետևյալներն են. 1) յերկուսն բույսեր, 2) միատուն բույսեր՝ և 3) յերկուսն բույսեր:

Հարց է ծագում, թե ինչպես է կատարվում փոշոտումը և բեղմնավորութունն այդ տարբեր խմբերին պատկանող բույսերի մեջ:

Այդ հարցի պատասխանը շատ պարզ է: Յեթե միևնույն տեսակին պատկանող մի բույս իր ծաղիկների մեջ ունի միայն արական օրգաններ, իսկ մյուս բույսը՝ միայն իգական, այսինքն՝ բույսը յերկուսն է, ինչպես, որինակ, թիֆեին, ապա պարզ է, վոր այստեղ փոշոտումը և բեղմնավորութունը կկատարվի տարբեր բույսերի միջև: Այսինքն, միայն իգական ծաղիկներ ունեցող բույսը, կամ, ուրիշ խոսքով՝ իգական բույսը, իր բեղմնավորութուն համար ծաղկափողի կրտսնա (քամու կամ միջատների միջոցով) մի ուրիշ բույսից, վորի ծաղիկներն ունեն միայն արական օրգաններ, այսինքն՝ միայն առեջներ:

Հասկանալի չէ, վոր միայն արական ծաղիկներ ունեցող բույսերը պտուղ չեն տալիս: Հասկանալի չէ նաև այն, վոր յեթե մի վորևէ վայրում գտնվին միայն իգական բույսեր, ապա նրանք ևս, ծաղկափողի չհասունալով, պտուղ չեն տա: Յեթե մի վորևէ հողամասում տնկում են միայն իգական բույսեր, ապա պարզ է, վոր այդպիսի տնկարանը բերք չի տա: Հետևելապես, հասկանալի չէ, վոր իգական բույսերի հետ միասին պետք է տնկել նաև արական բույսեր:

Պետք է ասել, վոր բնության մեջ ևս այդպես է լինում: Իգական ծառերի կողքին, իգական բույսերի կողքին աճում են նաև արական ծառեր, արական բույսեր:

Յերկուսն բույսերի փոշոտումը կոչվում է խաչաձև փոշոտում, իսկ բույսերը կոչվում են խաչաձև փոշոտվող բույսեր:

Այն բույսերի մեջ, վորոնց վրա կան յերկու սեռի պատկանող ծաղիկներ (որինակ՝ յեգիպտացորենը), վորոնք ունեն միայն արական կամ միայն իգական օրգաններ (այսինքն՝ բույսը միատուն է), փոշոտումը, բեղմնավորութունը կկատարվի և՛ միևնույն բույսի, և՛ տարբեր բույսերի մեջ: Այսինքն՝ մի բույսի արական ծաղիկների փողին կբեղմնավորի և՛ նույն բույսի իգական ծաղիկները, և՛ մի ուրիշ բույսի իգական ծաղիկները:

Այսպիսի փոշոտումն ևս խաչաձև է, և բույսերն ել համարվում են խաչաձև փոշոտվող բույսեր:

Յերկուսն բույսերի փոշոտումն ու բեղմնավորութունը ճիշտ հասկանալու համար պետք է նկատի առնել, թե այս բույսերը բաց են ծաղկում, թե՞ փակ:

Բաց ծաղկումն այն է, յերբ առեջը դեռ չհասունացած, դեռ ծաղկափողի չտված, վարսանդը դեռ չբեղմնավորված, ծաղիկը լավ բացվում է և կարող է բեղմնավորվել:

Պարզ է, վոր այս դեպքում վարսանդի սպիի վրա ծաղկափողի կընկնի՝

ա. կամ նույն ծաղկի առեջից (ինքնափոշոտում):

բ. կամ նույն բույսի ուրիշ ծաղիկների առեջից (խաչաձև փոշոտում):

գ. կամ ուրիշ բույսի ծաղիկների առեջից (խաչաձև փոշոտում):

Փակ ծաղկումը նա չէ, վոր ծաղիկը չի բացվում, վարսանդն ու նրա սպին հասունանում են փակ ծաղկի

բույսերի նսնում

2556
39

մեջ: Փակ ծաղկի մեջ է հասունանում նաև առեջըր և ծաղկափոշի տարով՝ փոշոտում է վարսանդը:

Պարզ է, վոր այս դեպքում, նույն բույսի, նույն ծաղկի առեջքից ստացված ծաղկափոշին բեղմնավորում է, նույն բույսի, նույն ծաղկի վարսանդը: Ահա այս է, վոր կոչվում է ինքնափոշոտում և այս ձևով փոշոտվող բույսերն են, վոր կոչվում են ինքնափոշոտվող բույսեր:

Այս բույսերի թվին է պատկանում նաև ցորենը:

Պետք է ասել, վոր խիստ ինքնափոշոտվող բույսերի մեջ ևս թեև շատ քիչ շախերով, տեղի յեն ունենում խաչաձև փոշոտում: Այս չափազանց հետաքրքրական յերեվույթի մասին ներքեվում ավելի մանրամասն կերպով կխոսենք: Իսկ այստեղ նշենք հետեվյալը. բույսերի տարբեր ձեվով փոշոտվելը և բեղմնալույսը. բույսերի համար պայմաններ են յեղել խաչաձև փոշոտելու և բեղմնավորվելու, և նրանք պահպանել են իրենց գոյութունը, այդ ձևով: Մի այլ դեպքում, բույսերը հնարավորութուն չեն ունեցել խաչաձև փոշոտվելու ու բեղմնավորվելու և ժամանակի ընթացքում հարմարվելով այդ պայմաններին, տըվել են ինքնափոշոտվող ձեվեր ու այդպիսով շարունակել են իրենց սերունդը: Սակայն ինքնափոշոտվող բույսերն արտաքին պայմաններին ավելի հաջողությամբ են հարմարվել շնորհիվ այն բանի, վոր նրանց մեջ ժամանակ առ ժամանակ տեղի յեն ունեցել և ունենում է խաչաձև փոշոտում:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր բեղմնավորութունը, վորը հսկայական նշանակութուն ունի բույսերի կյանքի համար, տարբեր բույսերի մեջ տարբեր ձևով է կատարվում:

Հարց է ծագում, թե բույսերի բեղմնավորության հիշված ձևերից վո՛րն է գերազանցիկ բույսերի համար: Հետաքրքրական է նաև, թե մենք ինչպես պիտի ոգտագործենք այդ բնական յերեվույթը մեր սոցիալ

լիտատեղան գյուղատնտեսության համար:

Այս հարցերին ճիշտ պատասխանելու և բույսերի ավելի արդյունավետ կերպով մշակելու համար մենք պետք է լավ ըմբռնենք, լավ հասկանանք բույսերի բիոլոգիան և հատկապես բույսերի խաչաձևվածան կառուցան ու նշանակութունը:

ԲՈՒՅՍԵՐԻ ԻՆԲՆԱՓՈՇՈՏՄԱՆ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽԱՉԱՉԵՎ ՓՈՇՈՏՄԱՆ ՌԿՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ակադեմիկ Լիանկոն զարդացնելով Դարվինի ուսմունքը և խորը կերպով ուսումնասիրելով բույսերի կյանքը, յեկավ այն յեղրակացության, վոր այն բույսերը, վորոնք շարունակ բեղմնավորվում են ինքնափոշոտման միջոցով, ժամանակի ընթացքում այլասերվում են: Իսկ այլասերված բույսերի ցրտադիմացկունությունը լինում է ցածր, չորադիմացկունությունը նույնպես լինում է ցածր, հատիկի վորակը լինում է վատ, բերքատվությունը՝ պակաս, զանազան հիվանդությունները՝ ժանդին, մրիկին դիմադրելը՝ թույլ:

Վորպեսզի ինքնափոշոտման միջոցով բեղմնավորվող բույսերը չայլասերվեն, ակադեմիկ Լիանկոն 1935 թվին առաջարկեց ստիպել այդ բույսերին բեղմնավորվելու խաչաձև փոշոտման միջոցով: Ակադեմիկ Լիանկոն, նրա հետ միասին աշխատող գիտնականները, նրա աշակերտները, ակադեմիկ Լիանկոյի ցուցանիշները կատարող կոլտնտեսականներն ապացուցել են, վոր բույսերի խաչաձև փոշոտումը հրաշալի միջոց է բույսերը բարեփոխելու համար: Շուր մի միջոց վորով բարձրանում է բույսերի բերքի քանակն ու որակը, բույսերի ցրտադիմացկունությունն ու դիմացկունությունը հիվանդությունների դեմ, այդ մի միջոց է, վորի շնորհիվ բույսն ուժեղանում է և ազդեցիկ է դառնում բնական պայմաններին:

Ինքնաբեղմնավորման վնասակարությունը, նաև խաչաձևով բեղմնավորման ողտակարությունը, վերաբերում են ինչպես կենդանիներին, այնպես էլ բույսերին:

Հայանի յե, վոր յերբ վոչխարի մի ընտանիք (մի վոչխարի սերունդ) յերկար ժամանակի ընթացքում իր միջից և խոյ (ղոչ) ստանում, այն ժամանակ այդ ընտանիքում սկսում են ծնվել թույլ գառներ: Սա նշանակում է, վոր վոչխարի այս ընտանիքն սկսում է ալլասերվել: Իսկ յերբ վոչխարի խոյը (ղոչը) փոխում էն, այն ժամանակ սկսում են ծնվել ուժեղ գառներ, վոչխարի սերունդն սկսում է բարելավվել և ուժեղանալ, այլասերման վտանգը վերանում է:

Կարելի չե բերել նաև հավերի որինակը. յեթե մի հավի ընտանիքի աքաղաղը յերկար ժամանակի ընթացքում լինում է իր միջից, ապա այդ դեպքում, այդ հավերի սերունդը հետզհետե սկսում է ալլասերվել, վորի հետեվանքով սկսում են ծնվել թույլ ճուտեր, հավերը թուլանում են, մանրանում, ավելի շատ են յենթարկվում հիվանդութունների, ձվերը թխտի տակ դնելու դեպքում ճուտ չեն տալիս, լակ են դուրս գալիս:

Առհասարակ բոլոր կենդանիների սերունդներն ալլասերվում են, յեթե նրանց բազմացումը կատարվում է առանց արուն փոխելու: Վոչ միայն ալլասերվում է այդպիսի կենդանիների սերունդը, այլ և հաճախ օտարունդ չի ստացվում:

Յերբ յերկար ժամանակ կենդանիների մի ընտանիքի արուն իրենից է լինում, ապա այդ դեպքում հաճախ է պատահում, վոր արուն թեև ծածկում է եզին, բայց եզը չի բեղմնավորվում:

Բանիմաց անասնապահներն իրենց փորձից դեռան, վոր անասունների արուն փոխելն օգտակար է և ժամանակ առ ժամանակ այդպես էլ վարվում են:

Այստեղ կարող է հարց առաջանալ, թե ինչպես է վոր վայրի կենդանիները չեն ալլասերվում ու վոչընչանում, չե՞ վոր նրանց արուն փոխող չկա: Պետք է ասել, վոր վայրի կենդանիների արուն փոխվում է, դա կատարվում է հետեվյալ կերպ. վայրի կենդանիների արունների մեջ միշտ կոխվ է տեղի ունենում,

ուժեղները հաղթում են թույլերին և, կամ սպանում են նրանց, կամ հեռացնում եզից: Ահա այսպես է փոխվում վայրի կենդանիների արուն: Յեվ պիսի ասել, վոր վոչ միայն փոխվում է, այլ և եզին ծածկելու համար ընտրվում է հաղթողը, այսինքն՝ ավելի ուժեղը: Այսպիսով կատարվում է բնական ընտրություն:

Ալլասերման յերկվույթը, ինչպես ասացինք վերեվում, վերաբերում է նաև բույսերին: Ալլասերման հրեշտակ գիտնական Դարվինը և նրա գործը շարունակող, մեր ժամանակների լավագույն գիտնական, սկազեմիկ Լիսենկոն նշել են, վոր այն բույսերը, վորոնք բազմանում են ինքնարեղմնավորման միջոցով, այսինքն՝ ինքնախոշոտման միջոցով, ժամանակի ընթացքում ալլասերվում են: Այդ բանը Դարվինն արտահայտել է շատ գեղեցիկ կերպով: Նա ասել է.

«Բնությունն ամենահանդիսավոր կերպով հայտարարում է մեզ, վոր նա զգվանք է զգում տևական ինքնարեղմնավորման հանդեպ»:

Ակադեմիկ Լիսենկոն զարմանալի պարզութամբ ցույց տվեց, վոր ուժեղ են լինում այն բույսերը, վորոնք բեղմնավորվում են խաչածեղ կերպով: Իսկ այն բույսերը, վորոնք բազմանում են ինքնարեղմնավորման միջոցով, թուլանում են և ալլասերվում: Ակադեմիկ Լիսենկոն բացատրեց, վոր ցորենի մի շարք արժեքավոր սորտեր, վորոնք մի ժամանակ բավականին տարածված են յեղել, վերացել են ալլասերվելու հետեվանքով:

Յեթե «բնությունը զգվանք է զգում տևական ինքնարեղմնավորման հանդեպ», ապա ի՞նչ է կատարվում այդ բնության մեջ, ի՞նչ է լինում այդ զգվանքի հետեվանքը: Այդ զգվանքի հետեվանքը լինում է այն, վոր ինքնարեղմնավորման միջոցով բազմացող բույսերը ժամանակի ընթացքում ալլասերվելով, թուլանում են և, վերջի վերջո, վերանում:

Ինքնաբեղմնավորման միջոցով բազմացող բույսերի մեջ ևս նկատուի և խաչածնի բեղմնավորութիւնը: Այս և, ինքնաբեղմնավորող բույսերի մեջ խաչածնի բեղմնավորութիւնը ջիշ է լինում, բայց այնուամենայնիվ լինում է, և հենց այդ խաչածն բեղմնավորութիւնից ստացվող բույսերն են, վորոնք ավելի կենսունակ են լինում և ավելի լավ են հարմարվում բնական պայմաններին:

Յեքք ինքնաբեղմնավորող բույսերի մեջ (որինակ՝ ցորենի) անց է կացվում խաչածնի փոշոտում, ստացվում է միանգամայն պարզ պատկեր, վորը հրաշալի կերպով ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ տարբերութիւն կա ինքնաբեղմնավորման հետեւանքով ալլոստերված և խաչածնի բեղմնավորման հետեւանքով բարելավված բույսերի միջև:

Յերկտուն բույսերը, միատուն բույսերը և յերկտուն բույսերն ատաղ են յեկել բազմաթիվ տարիներ ընթացքում: Այդ բույսերը հարմարվել են բնական պայմաններին և այժմ ել շարունակում են հարմարվել: Մարդն իր աշխատանքով պայմաններ է ստեղծել, վերպեսզի այդ բույսերից շատերն ավելի լավ հարմարվեն: Բայց ամենից լավ հարմարվել են այն բույսերը, վորոնք բազմանում են խաչածն բեղմնավորութիւնի միջոցով:

Բույսերը հարմարվելով բնական պայմաններին՝ հողին, ոգին, արեին, խոնավութիւնը, հարմարվել են նաև բազմանալու պայմաններին: Բույսերը հարմարվելով հողին, ոգին, արեին, խոնավութիւնը և այն, իրենց համար ընտրել են այնպիսի պայմաններ, վորոնք ամենից ավելի նպաստաւոր են իրենց գոյութիւնը պահպանելու համար: Բույսերը հարմարվելով նաև բազմանալու պայմաններին, ընտրել են ամենանպաստաւորը, այսինքն՝ խաչածն բեղմնավորելու յեղանակը:

«Չզվանք զդաւով» ինքնաբեղմնավորութիւնից,

բույսերն այնպէս են հարմարվել, վոր կարողանան խուսափել դրանից:

Այսպէս որինակ, յերկտուն բույսերը, հասկանալի պատճառով, յերբեք չեն կարող ինքնաբեղմնավորվել:

Միատուն բույսերն ևս ամեն կերպ խուսափում են ինքնաբեղմնավորութիւնից: Մուսափում են նախ նշումով, վոր նրանց արական և իգական որդանները գտնվում են առանձին ծաղիկների մեջ: Շատ հաճախ, արական և իգական որդանները հասունացած սեռական բջիջներ են տալիս վոչ միաժամանակ, վորը հնարավորութիւն էի տալիս ինքնաբեղմնավորութիւն կատարվելու:

Յերկտուն բույսերից շատերն ևս հարմարվել են միայն խաչածն բեղմնավորութիւնի համար: Այդ հարմարեցումը կայանում է նրանում, վոր այդ բույսերի ծաղիկների իգական և արական որդանները հասունանում են վո՛չ միաժամանակ: Շատ դեպքերում ել ավին ու առեչներն այնպէս են դասավորված լինում, վոր ինքնաբեղմնավորութիւնը դժվարանում է: Որինակ, սպին լինում է բարձր, իսկ առեչները լինում են ցածր: Առեչների աված ծաղկափոշին չի կարող ընկնել սպի վրա անմիջական կերպով, այլ կարող է ընկնել միայն քամու միջոցով: Իսկ քամու միջոցով այդ փոշին կարող է ընկնել և՛ նույն ծաղկի, և՛ մի ուրիշ ծաղկի սպի վրա:

Շատ հետաքրքրական է այն հանդամանքը, վոր խաչածն բեղմնավորմանը հարմարված բույսերն իրենց ծաղիկափոշով համարյա թէ յերբեք չեն բեղմնավորվում: Որինակ, կարելի չէ այդպիսի բույսերն անջատել մյուս բույսերից, պաշտպանել ուրիշ բույսերի ծաղիկափոշուց, ինչպէս ասում են՝ իզոլյացիայի յեմբարկել և տեսնել, վոր սրանք չեն բեղմնավորվում և անքի չեն բռնում: Ի հարկէ, հասկանալի չէ, վոր այս բայթի ծաղկափոշին ջամու միջոցով ընկնում է ինչպիսի վրա, բայց միևնույն բույսի ծաղկի սպին չի ընդունում միևնույն բույսի ծաղկափոշին, հակառակ

դեպքում ծագելը սերմ ու պտուղ կտար: Բայց Հենց վոր շատ բույսեր են լինում միմյանց մոտ, նկատվում է նորմալ բեղմնավորութուն և պտղակալում: Մա նշանակում է, վոր խաչածև բեղմնավորմանը հարմարված բույսի սպին ընտրում է մի ուրիշ բույսի ծաղկափոշի: Մա նշանակում է, վոր բույսի սեռական բջիջներն ունեն ընտրելու հատկութուն:

Բազմաթիվ տարիների ընթացքում բույսերը պայքարել են բնական պայմաններին հարմարվելու համար: Այդ բույսերից նրանք են շարունակել իրենց գոյութունը, վորոնք հարմարվել են բնության պայմաններին, վորոնք կարողացել են ընտրել բնությունից այն ամենը, ինչ նպաստում է իրենց գոյությունը պահպանելուն: Որինակ, բույսի տերեվը միշտ հարմար դիրք է ընդունում, վորպեսզի անհրաժեշտ քանակությամբ լույս ստանա, բույսի արմատներն աճում են դեպի հողի այն շերտը, վորն անհրաժեշտ խոնավութուն ունի, այդ արմատները հողից ընտրում են անհրաժեշտ սննդանյութեր: Յեթե աճող արմատը հանդիպում է վորևէ խոչընդոտի, ապա այդ արմատն ընտրում է աճման այլ ուղղութուն:

Մի խոսքով՝ բույսերն ընտրում են բնությունից այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրենց գոյությունն ապրելի լավ պահպանելու համար:

Բույսի գոյությունն ավելի լավ պահպանելու պայմաններից մեկն էլ նույն տեսակին պատկանող մի ուրիշ բույսի ծաղկափոշով բեղմնավորվելն է, վորին հարմարվել են բույսերը բազմաթիվ տարիների ընթացքում: Իսկ ինչի հարմարվել են բույսերը, դեպի այն էլ ձգտում են, և հեշտ չե փոխել նրանց այդ ձգտումը: Որինակ, բոլոր դեպքերում, յերբ խաչածև բեղմնավորմանը հարմարված բույսերին ստիպում են բեղմնավորվել ինքնափոշուսման միջոցով, կամ սեռունը չի ստացվում, կամ ատացվում է թույլ, նվազ սերունդ:

Այսպիսով, հասկանալի չէ, վոր բույսերի բեղմ-

նավորութունը պատահական կերպով չի լինում, այլ կատարվում է նրանց սեռական բջիջների ընտրողականության հատկութունն ունենալու հիման վրա:

Իսկ խաչածև փոշուսման դեպքում, սեռական բջիջների ընտրողական ժամանակ, ընտրվում են ամենալավերը, ամենաուժեղները, տեղի չե ունենում «ամուսնութուն սիրո հիման վրա», վորի շնորհիվ նրանց բեղմնավորությունից ստացված սերունդն ավելի ուժեղ, փարթամ ու դիմացկուն է լինում: Բույսերի ինքնաբեղմնավորման ժամանակ ընտրողական հնարավորությունը սահմանափակ է, իսկ խաչածեվ բեղմնավորման ժամանակ՝ անսահմանափակ:

Բայց այստեղ կարող է մի այսպիսի հարց առաջ գալ, թե յեթե բույսերի համար ավելի նպաստավոր է խաչածև կերպով բեղմնավորվելը, ապա ի՞նչն է պատճառը, վոր գոյությունն ունեն բազմաթիվ բույսեր, վորոնք բազմանում են ինքնաբեղմնավորման միջոցով:

Ինքնաբեղմնավորվող բույսերի թիվն իրոք բավականին մեծ է, և վերևում դրված հարցը տեղին է: Դարվինը տվել է այս հարցի պատասխանը, վորը հետևելիս է. բույսերը ձգտում են պահպանել իրենց գոյությունը և հարմարվում են բնական պայմաններին: Այն դեպքում, յերբ բույսերը հնարավորություն չեն ունեցել խաչածեվ կերպով բեղմնավորվելու, հարմարվել են ինքնաբեղմնավորմանը և այդ ձևով պահպանել են իրենց գոյությունը: Ահա այս ձևով է առաջացել բույսերի ինքնափոշուսման հատկությունը, վորը տեղի չե ունեցել հազարավոր տարիների ընթացքում, այսինքն, այսպես կոչված եվոլյուցիայի ընթացքում:

Ինչպես ասացինք, ինքնաբեղմնավորումը վախճապար է բույսի համար, իսկ խաչածեվ բեղմնավորումը, ընդհակառակը, ոգտակար: Մա բացատրվում է նրանով, վոր խաչածև բեղմնավորման ժամանակ տեղի չե ունենում «ամուսնություն սիրո հիման վրա», վոր վարսանդն ընտրում է ամենալավ արական բջիջը: Մակաջն այս միտյն հարցի մի

կազմեմ եւ և կա մի այլ, չափազանց կարեւոր հանգա-
մանք, ահա այս հանգամանքը ճիշտ բացատրելու հա-
մար պետք է լավ պատկերացնել, թե իրենից ի՛նչ է
նեքիպայացնում բույսի սեռական բջիջը, կամ, ինչպէս
ասում են, գամետան:

Բույսի սեռական բջիջը, կամ գամետան, ընդու-
նակ է բեղմնավորելու (յեթե արական է) կամ բեղմ-
նավորվելու (յեթե իգական է): Սեռական բջիջները
միմյանց միանալուց հետո, կամ, ինչպէս ասում են,
գեղատու կազմելուց հետո, ընդունակ են դարձանալու
և նոր որդանիզմ, նոր բույս տալու:

Հասկանալի չէ, վոր յերբ բույսը բազմանում է
ինքնարեղմնավորման միջոցով, ապա այդ դեպքում,
թե՛ արական և թե իգական բջիջները միեւնույն բույ-
սից են: Իսկ յերբ բույսը բազմանում է խաչաձև
բեղմնավորման միջոցով, ապա այդ դեպքում, արա-
կան և իգական բջիջները տարբեր բույսերից են:

Յերկու սեռական բջիջների միացումից առաջացած
նոր որդանիզմի մեջ յուրաքանչյուր սեռական բջիջ
արտաահայտում է իր ծնողի հատկութունները:

Յեթե թե՛ արական և թե իգական բջիջները միեւ-
նույն ծնողներից են, ապա պարզ է, վոր նրանք յեր-
կուսն ել նոր որդանիզմի մեջ կարտահայտեն միեւ-
նույն ծնողի հատկութունները և այս նոր որդանիզմը
նման կլինի ծնողական որդանիզմին, այն որդանիզ-
մին, վորից ստացվել են սեռական բջիջ-
ները: Հասկանալի չէ, վոր վոչ մի բույս
(ինչպէս յեզ վոչ մի կենդանի) չի կարող ճիշտ
յեզ ճիշտ նույնը լինել, ինչ վոր նրա ծնողն
է յեղել, և վորևէ բանով կտարբերվի: Բայց նկատի
պէտք է ունենալ, վոր վորքան շատ նման լինեն ծնո-
ղական բույսի և նրա սերնդի աճման պայմանները,
այնքան ել նրանք շատ նման կլինեն միմյանց և, ընդ-
հատաաւելը, վորքան քիչ նման լինեն նրանց աճման
պայմանները, այնքան ել նրանք քիչ նման կլինեն մի-
մյանց:

Յեթե սեռական բջիջները տարբեր ծնողներից են,
ապա նոր որդանիզմի մեջ նրանցից յուրաքանչյուրը
կարտահայտի իր ծնողի հատկութունները: Այս նոր
որդանիզմը, այսինքն նոր բույսը, նման կլինի և՛ արա-
կան բջիջի ծնողին, և՛ իգական բջիջի ծնողին, այսինքն՝
նման կլինի և՛ հորը, և՛ մորը: Բայց պետք է նկատի
ուրնենալ, վոր յեթե այս նոր բույսի մշակման պայ-
մաններն ավելի շատ նման լինեն հոր մշակման պայ-
մաններին, ապա սա ավելի նման կլինի հորը և, ընդ-
հատաաւելը, յեթե սրա մշակման պայմաններն ավելի
շատ նման լինեն մոր մշակման պայմաններին, ապա
սա ավելի նման կլինի մորը:

Ամենակարեւորն այն է, վոր ինքնարեղմնավոր-
ման միջոցով ստացվող բույսն իր մեջ ունի միայն
մեկ բույսի հատկութուն, իսկ խաչաձև բեղմնավոր-
ման միջոցով ստացվող բույսը՝ յերկու բույսի հա-
կութուն: Սա նշանակում է, վոր ինքնարեղմնավոր-
ման միջոցով ստացվող բույսը հեշտութեամբ կարող
է հարմարվել միայն մի տեսակ պայմանների և, հետե-
վապես, նրա մշակելու հնարավորութունն ավե-
լի փոքր կլինի: Իսկ խաչաձև բեղմնավորման միջոցով
ստացվող բույսը հեշտութեամբ կարող է հարմարվել
թե՛ մայր բույսի և թե հայր բույսի պայմաններին և,
հետևելապես, նրա մշակելու հնարավորութունն ավե-
լի մեծ կլինի:

Այստեղից ել պարզ է, վոր խաչաձեւ բեղմնավոր-
ման միջոցով ստացվող բույսն ավելի արժեքավոր է,
քան թե ինքնարեղմնավորման միջոցով ստացվող բույ-
սը:

Ահա արանով է բացատրվում բույսերի ինքն-
բեղմնավորման վնասակարութունը և խաչաձև բեղմ-
նավորման օգտակարութունը:

ՅՈՐԵՆԻ ՑԱՆԻԻ, ՍՈՐՏԻ
ՅԵՎ ԲՈՒՅՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱՉԱԶԵՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Յորենի ներսորտային խաչաձևվումն անցկացնելու համար շատ մեծ նշանակություն ունի ցանքի սորտի, իսկ ցանքի մեջ՝ բույսերի ընտրությունը: Ներսորտային խաչաձևվման համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի ցանք, վորը զտասորտ է, կամ թե չէ, ունի բարձր զտասորտություն: Ինչպես առհասարակ ամբողջ Միություն մեջ, այնպես էլ Հայաստանում կան լայն հնարավորություններ զտասորտ կամ բարձր զտասորտություն ունեցող ցանքեր ընտրելու:

Հայաստանում մշակվում է «Ուկրաինկա» սորտը: Մասնաշաղկապ ընտրություն միջոցով ընտրված ցորենների ցանքեր ունենք համարյա թե մեր բոլոր շրջաններում և բոլոր կոլտնտեսություններում: Այդպիսի ցորեններից կարելի չէ թվել, որինակ, «Ապրիլահատը», «Դեկտեմբեր», «Համադանիկումը», «Գյուլջանին», «Ներինացեումը», «Ռուբրիցեպուր», «Գոմբոբկան» (տուկուզ), «Ալթի-ազալը», «Մլխահատը» յեվ այլն: Այս բոլոր ցորենների ցանքերը կամ ազատ են խառնուրդներից, կամ թե չէ չնչին խառնուրդ ունեն:

Իհարկե, շատ ցանկալի չէ, վոր ներսորտային խաչաձևումը կատարվի միանգամայն զտասորտ, մաքուր ցանքում, բայց յեթե այդպիսի ցանք չկա, ներսորտային խաչաձևումը կարելի չէ կատարել նաև այդպիսի ցանքում, վորի զտասորտությունն ավելի պակաս է, մանավանդ յեթե այդ ցանքն աչքի չէ ընկնում լավ բերքատվությամբ:

Կարելի չէ բերել հետևյալ որինակը. Կոտայքի շրջանի Արամուս գյուղի կոլտնտեսությունը 1937 թ. պետք է կատարեր ներսորտային խաչաձևում: Կոտնտեսությունն ուներ «Ռուբրիցեպուր» կոչվող ցորենի ցանք, վորի սերմացուն ստացել էր մասնաշաղկապ ընտրության միջոցով: Սակայն մասնաշաղկապ ընտրությունը բավականաչափ մաքուր չէր յեղել, վորի հետևանքով ցանքի մեջ կային «Դեկտեմբեր» և «Գրեկումբ» հատկեր, բայց շատ քիչ քանակությամբ: Հենց այդ ցանքում էլ կոլտնտեսությունը կատարեց խաչաձևում և ստացավ լավ արդյունքներ: Այս որինակը ցույց է ապրիս, վոր ներսորտային խաչաձևումը կարելի չէ կատարել նաև այնպիսի ցանքի մեջ, վորի հիմնական մասը վորեև տեսակի ցորեն է, իսկ մյուս ցորենները կազմում են խառնուրդ: Բայց, կրկնում ենք, վոր ինչքան բարձր լինի ցորենի ցանքի բերքատվությունը և զտասորտությունը, այնքան լավ արդյունք կստացվի ներսորտային խաչաձևումից:

Ներսորտային խաչաձևումը կատարելու ժամանակ ինչպես վարվել, յեթե կոլտնտեսությունը մշակում է վոչ թե մի, այլ մի քանի տեսակի ցորեն. պետք է խաչաձևում կատարել բոլոր տեսակների մեջ թե՛ աշնանացանի և թե՛ զարնանացանի: Սա չափազանց կարևոր է և ահա թե ինչու. ներսորտային խաչաձևումը, ինչպես ասվեց վերևում, վերանորոգելով ցորենի անտակը, բարձրացնում է նրա չորագիմացկունությունը, ցրտադիմացկունությունը, հատիկի սպիտակուցի քանակը, չարակելու հատկությունը, մի խոսքով, ներսորտային խաչաձևման հետևանքն այն է լինում, վոր ցորենը (նաև մյուս բույսերը) ավելի հեշտությամբ է հարմարվում բնական պայմաններին և ավել-

Այլ շատ բերք է տալիս, քան չխաչաձևած ցորենը, և բերքի վորակն էլ ավելի բարձր է լինում:

Հայտնի չե նաև, վոր վորքան հին է ցորենի տեսակը, վորքան վաղուցվանից է մշակվում ցորենը, այնքան ավելի մեծ է լինում ներսորտային խաչաձեվման արդյունքը: Իսկ, ինչպես հայտնի չե, Հայաստանում մշակվող տեղական բոլոր ցորեններն էլ հին են:

Մի ուրիշ հանդամանք էս. հայտնի չե, վոր ներսորտային խաչաձեվումը տարբեր պայմաններում տարբեր արդյունքներ է տալիս, իսկ, ինչպես հայտնի չե, Հայաստանի տարբեր շրջանների պայմանները թիստ տարբերվում են միմյանցից:

Այս բոլորն ստում է այն մասին, վոր ներսորտային խաչաձևում պիտի կատարել բոլոր ցորենների մեջ: Այսպիսի աշխատանքի արդյունքն այն կլինի, վոր մենք ներսորտային խաչաձեվման միջոցով կատուգենք մեր բոլոր ցորենները, կպարզենք, թե նրանցից վո՞րն է ամենից լավ յեվ ամենից շատ բերք տալիս, վո՞րն է ավելի հարմարվող մեր պայմաններին, յեվ, ընտրելով ամենալավը լավերի միջից, սորտ կտանք և՛ մեր հանրապետութանը, և՛ մեր հարևան յեղբայրական հանրապետութուններին:

Շատ կարելի է նաև այն ցանքի ընտրութունը, վորի մեջ պետք է կատարվի ներսորտային խաչաձեվումը: Համարյա թե միշտ, ամեն մի կոլտնտեսութուն ունենում է միևնույն տեսակի ցորենի մի քանի գատնա: Վո՞րն ընտրել այս ցանքերից: Ներսորտային խաչաձեվման համար պետք է ընտրել ամենալավ, պարտադիր է լավ մշակված հողում կատարված լավագույն ցանքը, վորը խոտատանում է ամենաբարձր բերք: Մի խոտքով, ներսորտային խաչաձևումը պիտի կատարել ամենաբերքատու ցանքի մեջ:

Միանգամայն հնարավոր է այսպիսի մի գեղքը,

վոր կոլտնտեսութունն ունենա մի տեսակ ցորենի, սակնք թե՛ «նուրբիցեպի» յերկու ցանք, վորոնցից մեկի զտասորտութունը լինի բարձր, իսկ բերքատվութունը ցածր, մի այլ ցանքի զտասորտութունը ցածր, իսկ բերքատվութունը բարձր: Վո՞րն ընտրել այս ցանքերից ներսորտային խաչաձևման համար: Ասանց տատանվելու պետք է ընտրել այն ցանքը, վորի զտասորտութունը ցածր է, բայց դրա վորտարեն բերքատվութունը բարձր է:

Չափազանց կարևոր է նաև բույսի ընտրութունը: Ամեն մի հողագործի հայտնի չե, վոր վորքան էլ միատեսակ լինի հողը, վորքան էլ զտասորտ լինի ցանած ցորենի սերմացուն, այնուամենայնիվ ցանքի մեջ յեղ զոգ բույսերը միանման ու միատեսակ չեն լինի: Նըրանց մեջ կլինի և՛ թույլը, և՛ ուժեղը, և՛ լավը, և՛ վատը, մի խոտքով, տարբեր բույսերի մեջ անպայման վորոշ տարբերութուն կլինի: Հարց է ծագում, թե վո՞րն ընտրել այս բույսերից ներսորտային խաչաձեվման համար: Պարզ է, վոր պետք է ընտրել ամենադիպրեթամ, ամենալավ զարգացած բույսը: Իսկ ամենալավ բույսի միջից էլ պետք է ընտրել ամենալավ հասկը: Սաչաձեվման համար յերբեք չպետք է ընտրել րե՛հա հասկերը:

Ինչի՞ համար պիտի այսպիսի ընտրութուն կատարել ներսորտային խաչաձեվման ժամանակ: Նրա համար, վոր ընտրելով լավագույն, բերքատու ցանքը, լավագույն բույսն այդ ցանքից և լավագույն հատկն այդ բույսից, մենք ընտրում ենք լավագույն սերմացու ասղագա ցանքի համար:

Յեվ քանի վոր այդ ձեվով ընտրած հասկի հատիկներն ատացվում են ներսորտային խաչաձևման միջոցով, վորի ժամանակ բույսն իր բեղմնավորման համար ընտրում է լավագույն ծաղկափոշին, ասղա ուրեմն կրկնակի անգամ լավանում է նրանց վորակը: Այսպիսով, դուրս է գալիս, վոր խաչաձևումը կատարող կող-

անտեսակեանք բույսի սերմացույի վորակը լալագնում
և և՛ ընտրութեան միջոցով, և՛ խաչածնում միջոցով:
Իսկ, ինչպէս հայտնի յե, ընտրութեանը և ներսրտա-
յին խաչածնումը հրաշարի միջոց են բույսերը բարեւա-
վելու, նրանց մեր ցանկացածի պէս փոփոխելու և նը-
բանցից նոր տեսակներ ստեղծելու համար:

Յուրաքանչյուր կոլտնտեսական շատ լալ գիտե,
թե ինչ բան է լալ սերմացուն: Նա գիտե, վոր վա-
րունդի սերմացույի համար պետք է թողնել ամենալալ
վարունդը, ձմերուկի սերմացույի համար պետք է թող-
նել ամենալալ ձմերուկը, սամիդորի համար՝ ամենա-
լալ սամիդորը, բաղրիջանի համար՝ ամենալալ բաղ-
րիջանը: Նա գիտե նաև, վոր ցորենի սերմացույի հա-
հար պետք է հատկացնել ամենալալ ցանքից ստացված
հատիկը: Ծատ հաճախ մեր կոլտնտեսականները սեր-
մացույի համար ընտրում են ամենալալ հասկերը, այդ
ամենալալ հասկերից ընտրում են ամենալալ հատիկ-
ները, վորի համար կտրում ու հետադնում են հասկի
հիմքի և ծայրի թույլ հատիկները:

Մեր կոլտնտեսականներն այսպես են անում, վո-
րովհետեւ նրանք լալ գիտեն, վոր բույսերը փոփո-
խութեան են յենթարկվում, վոր բերքառատ ցանք ու
բույս կստանան, յեթե ընտրեն լալ, բերքառատ ցանքի
և բույսի սերմացու, վոր վատ ցանք ու բույս կստա-
նան, յեթե սերմացուն վերցնեն նվազ ու անբերքատու
ցանքից ու բույսից:

Իսկ ինչպէս մարդիկ (գծրախտաբար գիտնականի
կոչում ունեցող մարդիկ), վորոնք այդպէս չեն մտա-
ծում: Նրանք կարծում են, վոր մաքուր սորտի, ա-
սենք թե՛ «Ուկրաինկա» ցորենի, թե՛ լալ բերքատու
ցանքը և թե վտիտ, վոչ բերքատու ցանքը տալիս են
միանման բնույթի, միանման վորակի հատիկ: Վոր
միևնույն է, «Ուկրաինկան» «Ուկրաինկա» յե, «Սպի-
տասկահատը» «Սպիտակահատ», «Կոնդիկը» «Կոնդիկ»,
և նրանց վոր բույսն էլ վերցնեն, վտիտ թե ուժեղ,
բերքատու թե անբերքատու, միևնույն է, կոտացվեն:

միանման բնույթի, միանման վորակի հատիկներ:

Այդ մարդիկ ասում են, վոր միևնույն սորտի բույ-
սերի բոլոր հատիկները (հետևապես բոլոր սերմա-
ցուները), իրենց բնույթով նման են և յեթե ցանվեն
միանման պայմաններում, ապա կստացվի միևնույն
արդյունքը:

Այդ մարդիկ ասում են, վոր բույսի միևնույն
սորտի սերմերն իրենց բնույթով նման են իրար և այդ
բնույթն անփոփոխ է ու ինչքան էլ լալ ցանքի կամ
լալ բույսի սերմացու ընտրես, ինչքան էլ ուշադրու-
թյուն դարձնես սերմացույի վորակի վրա, միևնույն է,
այդ սորտը փոխել, բարելավել, ավելի բերքատու
դարձնել չես կարող, չես կարող, վորովհետեւ բույսի
բնույթն անփոփոխ է:

Դժբախտաբար այդպիսի գիտնականներ մինչև
այսօր էլ կան: Այդ գիտնականներն ամերիկացի գիտ-
նական Մորգանի անունով կոչվում են մորգանիստ-
ներ: Ահա այդ մորգանիստ գիտնականներն ահագին
վնաս են հասցրել մեր սոցիալիստական գյուղատնտե-
սութեանը:

Յեւ այդպիսի գիտնականները դեմ է, վոր իր աշա-
կերաների հետ միասին անհաշտ պայքար և մղում մեր
յերկրի ամենատաղավոր գիտնական, ակադեմիկ Տրո-
ֆիմ Իենիսովիչ Լիսենկոն: Նա պայքարում է իսկական
գիտութեան համար, նա սովորեցնում է մեզ, վոր
բույսերը փոփոխվում են, սովորեցնում է դեկավարել
բույսերի այդ փոփոխութեանն այնպէս, վոր նրանք
մարդուն տան ավելի բարձր վորակի ու քանակի
բերք:

ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱՉԱԶԵՎՄԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ

Ա. ԿԱՍՏՐՈՅԻՆ

Վերելում ասիեց, վոր կան բույսեր, վորոնք
բեղմնավորվում են ինքնափոշոտման միջոցով, այ-
սինքն՝ բույսի միևնույն ծաղկի մեջ գտնվող իգական
բույսերի նեՍ—3

որդանը (վարսանդն իր սպիտկ) փռչումովում ու բեղմնավորում է հենց նույն ծաղկի մեջ գանխող արակյան որդանների (տառչքների) տված ծաղկափռչով:

Մասկայն կարելի չի այնպես անել, վոր ինքնափռչուման միջոցով բեղմնավորվող բույսերը բեղմնավորվեն վոչ թե իրենց ծաղկափռչով, այլ ուրիշ բույսի ծաղկափռչով, այսինքն՝ բույսը վոչ թե ինքնափռչումի, այլ փոչոտովի խաչաձև կերպով:

Յորկնը պատկանում է ինքնափռչուման միջոցով բեղմնավորվող բույսերի թվին: Հարց է ծագում, թե ինչպես անենք, վորպեսզի թույլ չտանք նրան իր ծաղկափռչով փոչոտվելու: Ուրիշ խոսքով, ինչպե՞ս կատարենք ցորենի ներսորտային խաչաձևումը:

Այս հարցի պատասխանը պարզ է, յեթե ցանկանում ենք, վոր մի վորեն ինքնափռչումով բույս բեղմնավորվի վոչ թե իր, այլ ուրիշ բույսի ծաղկափռչով, պետք է այս բույսի ծաղիկների միջից հեռացնենք տառչքները:

Ուրեմն, յեթե ցանկանում ենք, վոր ցորենի մի բույս բեղմնավորվի ուրիշ բույսի ծաղկափռչով, պետք է սրա ծաղիկների միջից հեռացնենք տառչքները, կամ այնպես անենք, վոր տառչքները ծաղկափռչի չտան:

Ահա այս գործողութունը, այսինքն՝ տառչքների հեռացումը ծաղիկների միջից, կոչվում է կատարացիա: Կատարացիա չէ կոչվում նաև ամեն մի միջոց (որինակ՝ կտրելը), վորը մնասում է տառչքներին և նրանց զրկում է ծաղկափռչի տալու ընդունակութունից:

Սկսած 1935 թվից, յերբ ակադեմիկ Լիսենկոն առաջարկեց ներսորտային խաչաձևումը վորպես ցորենների սորսերի բարելավման միջոց, լայն աշխատանք է տարվում ցորենի կատարացիան հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու համար:

1935 թ. ամառը Ողեսայի՝ Սեյեկցիայի և Գենետիկայի ինստիտուտի աշխատակից, դոկտոր Դոլգուշինն առաջարկեց ցորենի ներսորտային խաչաձևում անցկացնել սովորական ձևի կատարացիայի միջոցով:

Իսկ 1936 թվին դոկտոր Դոլգուշինը, ներսորտային խաչաձևուման աշխատանքները հեշտացնելու նպատակով, առաջարկեց հասկերի կատարացիան կատարել տառչքների ծայրերը կտրելու միջոցով: Այս բանը կատարվում է հետևյալ ձևով. բարակ ծայրեր ունեցող վորքերի մկրատով խուզում են յուրաքանչյուր հասկիկի վերելի ծայրը, բայց խորը չեն խուզում, այլ այնպես են անում, վոր մկրատը կտրի միայն տառչքի վերելի ծայրերը: Յեթե տառչքը շատ խորը կտրեն, ապա կվնասվի նաև սպին, իսկ յեթե սպին վնասվի, պարզ է, վոր հատիկ չի գոյանա: Սրա համար ել հասկիկն այնպես են խուզում, վոր կտրվեն միայն տառչքների վերելի ծայրերը, իսկ սպին անվնաս մնա: Յերբ հասկիկների ծայրերը ճիշտ ձևով են խուզում, հասկերն ստանում են այնպիսի ձև, ինչպիսին ցույց է արված Յ-րդ նկարում:

Դոկտոր Դոլգուշինը յենթադրում էր, վոր տառչքներն այս ձևով կտրվելով՝ ծաղկափռչի չեն տա և ավյալ ծաղիկը ծաղկափռչի կտանա ուրիշ բույսից: Յե՞վ ջանի վոր ծաղիկների թիվակները խուզելու զեպում անցը է բացվում զեպի վարսանդի սպին, ապա ծաղկափռչին քամու միջոցով շատ հեշտացածը բնկնում է սպի վրա, վորը և խեղդ է բեղմնավորութուն համար:



Նկ. 6. Ցորենի հատիկ տառչք խուզելուց հետո

Մի տարի հետո դոկտոր Դուբուշինն առաջարկեց ուշադրութիւն չդարձնել, թե հասկիկները ծայրերը խուզելու ժամանակ առեւճըները կարվում են, թե՞ վոչ: Նա տեսնում էր՝ բավական է ծաղիկը խուզել այնպես, վոր անցք բացվի դեպի սպին, վորպեսզի ծաղկափոշին այս անցքի միջով հեշտութեամբ ընկնի նրա վրա: Իսկ, ինչպես հայտնի չէ, յեթե վարսանդի սպիւի վրա ընկնում է նույն ծաղկի և մի ուրիշ բույսի ծաղկափոշին, ապա բեղմնավորութիւնը կատարվում է ուրիշ բույսի ծաղկափոշով և վոչ թե նույն ծաղկի ծաղկափոշով (այս մասին ասված է վերեւում):

Այս ձեւի ներսորտային խաչաձեւման ժամանակ փաստորեն կատարացիա չի կատարվում, և առեւճըները մնում են խուզած ծաղիկների մէջ: Սա նշանակում է, վոր խաչաձեւում կարող է կատարվել միայն յերկու դեպքում. մեկ այն ժամանակ, յեթե ծաղիկը ժամանակին խուզվի, յերբ դեռ նրա առեւճըները կանաչ են ու ծաղկափոշի չեն սվել: Պարզ է, վոր այս դեպքում ուրիշ բույսերից ծաղկափոշին քամու միջոցով կգա, և այս ծաղիկը կբեղմնավորի, այսինքն՝ կկատարվի խաչաձեւում: Մեկ էլ այն դեպքում, յեթե խուզված ծաղկի սպիւի վրա ճիշտ միաժամանակ ընկնի է՛րբ, և՛ ուրիշ բույսի ծաղկափոշին: Այս դեպքում պարզ է, վոր բեղմնավորութիւնը կկատարվի ուրիշ բույսի ծաղկափոշով, այսինքն՝ դարձյալ կկատարվի խաչաձեւում:

Բայց յեթե հասկիկներն ուշ են խուզվել, ու առեւճըներն արդեն հասունացել ու ծաղկափոշի չեն արվել, նշանակում է բեղմնավորութիւնը կատարվել է ինքնափոշոտման միջոցով, և, հետևապես, խոսք չի կարող լինել խաչաձեւման մասին:

Կարող է պատահել, վոր հասկիկները խուզվեն ժամանակին, բայց այնպես խուզվեն, վոր անցք չբացվի դեպի սպին: Այս դեպքում ուրիշ բույսի ծաղկափոշին չի կարող ընկնել խուզված անցքի սպիւի վրա, վորը ծաղկափոշի կատանա իր սեփական առեւճըներից

և, նշանակում է, դարձյալ չի կատարվի խաչաձեւում, այլ կկատարվի ինքնափոշոտում:

Խաչաձեւումն այն ժամանակ կկատարվի անխաղ կերպով, յերբ հասկիկներ խուզողը կարողանա ճիշտ ընտրել հասկը և ճիշտ խուզել հասկիկները:

Բայց փորձը ցույց է տվել, վոր մեր կոլտնտեսականներից յերեք—չորս հոգուց միայն մեկն է կարողանում ճիշտ կերպով կատարել այդ աշխատանքը. 1937 թվին Ուկրաինայում 15.000 կոլտնտեսութիւնում հասկ է խուզվել յեւլ մանրամասն ուսումնասիրվել են այդ աշխատանքի արդյունքները: Պարզվել է, վոր այդ արդյունքները բավարար չեն: Դրա հիման վրա դոկտոր Դուբուշինն առաջարկել է ներսորտային խաչաձեւման աշխատանքներն անցկացնելու համար կատարել իրական կատարացիա, այսինքն՝ առեւճըները լրիվ հեռացնել ծաղիկներից:

Դոկտոր Դ. Ա. Դուբուշինի վերջին առաջարկի համաձայն, հասկերի հասկիկները դարձյալ պիտի խուզվել, վորպեսզի անցք բացվի դեպի վարսանդի սպին, և խաչաձեւ փոշոտումը հեշտանա: Հասկերի հասկիկները խուզելուց հետո պետք է կատարացիայի յենթարկել ամբողջ հասկը, հասկի բոլոր ծաղիկները: Ներսորտային խաչաձեւման աշխատանքները 1938 թվին պետք է կատարվեն այս ձեւով:

Դիտութիւնների Ակադեմիայի Հայկական Ծելիտալի Բիոլոգիական Ինստիտուտի գիտական աշխատակիցներ Գուլբանյանը յեւլ Սուրմինյանը 1938 թվին Հայաստանի մի շարք կոլտնտեսութիւններում կիրառել են ցորենի ներսորտային խաչաձեւում, վորի ընթացքում հասկերը յենթարկել են կատարացիայի, առանց հասկի հասկիկները խուզելու:

Հասկերի հասկիկներն առանց խուզելու կատարացիա անելը, համեմատած խուզելով կատարացիա անելու հետ, ունի մի շարք առավելութիւններ: Ամենից առաջ անհրաժեշտ չի լինում մկրատ գործ անել: Մտտ հետեւանքով ահապիս իննչոյութիւն է կատար-

վում: 1930 թ. Հայաստանում 400—600 հոլանդական-
թյուն պետք է ներսորտային խաչաձեւում անցկաց-
ան: Յեթն հաշվենք, վոր յուրաքանչյուր հոլանդա-
նություն պետք է դորձ ամի 10—15 հատ մկրատ,
այդ ուրեմն խնայվել է 5000—7500 հատ մկրատ:

Բացի արանից, մկրատ դորձ չածելն արտադրողում է
աշխատանքը, բարձրացնում է նրա արտադրողակա-
նությունը:

Յեւ հետո, վոր ամենակարեւորն է, չխուզված
հասկերը տալիս են ավելի խոշոր, ավելի ծանր հա-
տիկներ, քան խուզվածները:

Կարելի չի յենթադրել, վոր յեթէ հասկերի հաս-
կիկները չխուզենք, այդ ծաղկափոշին ծաղկի թե-
փուկները արանքով չի կարող անցնել, և ծաղկից կեւա
տանց բեղմնափորվելու է, հետեւապես, հատիկ չի գո-
յանա: Յեթն այս յենթադրությունը ճիշտ է, ասոյս
պարզ է, վոր անհրաժեշտ է խուզել հասկերի հատիկի-
ները, վորպէսզի անցք բացվի դեպի սպին, և այդ անց-
քով կարողանա անցնել ծաղկափոշին:

Սակայն այդ յենթադրությունը, թե ատանց հաս-
կիկների ծայրերը խուզելու ծաղկափոշին չի անցնի
դեպի սպին, ճիշտ չէ: Ընդ չէ, քանի վոր ծաղկա-
փոշին կարող է անցնել անգամ բոլորովին ձեռք չառ-
ված հասկերի ծաղկիների թեփուկների արանքով: Չէ՞
վոր անգամ բնական պայմաններում, ատանց մարդու
միջամտութեան, ցորենի խաչաձեւում կատարվում է:
Սա նշանակում է, վոր ծաղկափոշին կարող է անցնել
անգամ ձեռք չառված ծաղկաթեփուկների արանքով:

Յերբ բույսի սեռական որդանները միանգամայն
հասունանում են, այդ ժամանակ վարսանդի սեռմու-
րանն ուղռում է և, ուռչելով՝ հրում է ծաղկիկային թե-
փուկներին և շատ թե քիչ նրանց հեռացնում միմյան-
ցից: Պարզ է, վոր այս բանն ևս հեշտացնում է փոշո-
տում և բեղմնափորությունը:

Յեւ հետո, նկատի պետք է առնել, վոր յերբ հաս-
կերը կատարացիա յեն արվում, նրանց ծաղկիկների թե-
փուկները շատ թե քիչ թուլանում են, շատ թե քիչ

անում են իրարից, վորը հնարավորութեան է տալիս
ծաղկափոշուն արագ կերպով անցնելու ծաղկի մեջ և
ընկնելու սպին վրա:

1938 թիկն մեր կատարած աշխատանքը ցույց
տալից, վոր ատանց հասկերը խուզելու կատարացիան ան-
նելու դեպքում, ծաղկիկների բեղմնափորությունը և
հատիկներ բռնելն ավելի լավ է կատարվում, քան թե
հասկերը խուզելով կատարացիա անելու դեպքում:

Բ. ՅՈՐԵՆԻ ԿԱՍՏՐՍՅԻԱ ԿՈՍՏՐԵՆՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Յորենի կատարացիան պետք է սկսել, հենց վոր
սկսվում է նքա բույսերի հասկակալումը և պիտի վեր-
ջացնել մինչև ցանքի մաստայական ծաղկումը: Պետք է
գրտեալ, վոր ցորենի հասկակալումն էլ, մաստայա-
կան ծաղկումն էլ տեղի յեն ունենում կարճ ժամանա-
կամիջոցում, աստի գգույշ պիտի լինել, վոր այդ ժա-
մանակը ձևուրից չզեն:

Աշանացան ցորենի հասկակալումը տեւում է 3-ից
մինչև 8 որ, դարձանացանինը՝ 2-ից մինչև 4 որ: Ցո-
րենի մաստայական ծաղկումը տեւում է 2-ից մինչև 3
որ: Այս ժամանակի տեւողությունը կախված է յեղա-
նակներից: Յեթն յեղանակը չոր է ու տաք, հասկակա-
լումն ու ծաղկումը կատարվում է ավելի կարճ ժամա-
նակամիջոցում, յեթն ցուրտ և ու խոնավ՝ ավելի
յերկար է տեւում:

Կատարացիան սկսելու համար պետք է ուշադիր
հետեւիլ, թե յե՞րբ է սկսվում ներսորտային խաչաձե-
ման համար նախատեսված ցանքի հասկակալումը:
Հասկակալումը սկսված է համարվում այն ժամանակ,
յերբ հասկերի ծայրերը մաստայական կերպով սկսում
են դուրս դալ տերեւաբներից: Ահա այս մոմենտից էլ
պետք է սկսել կատարացիան:

Իսկ ի՞նչպիսի կատարել կատարացիան, յերբ հաս-
կերը դեռևս տերեւաբներից դուրս չեն յեկել:

Պարզ է, վոր տերեւաբունը պետք է բաց անել,
գգույշ կերպով ծաղիլ, և այս ձևով հանել հասկը:

Այս դործողութեան ժամանակ տերեվը չպետք է կարել, տերեվարունը չպետք է կտարել, այլ միայն պիտի ծալել: Յեթե տերեվը կամ տերեվարունը կտարվեն, բույսի անողատուութեանը կթուլանա, վարը պարզ է, շատ անցակայի յե:

Պետք է ասել, վոր ջիւտերը յերեվարուց 1—2 որ հետո հասկերն սկսում են դուրս գալ տերեվարներից և այլևս կարիք չի լինում տերեվարունը բացելու ու ծալելու: Այս դեպքում կարելի չէ կատարացիա անել այն հասկերը, վորոնք նոր են դուրս յեկել տերեվարներից: Այս հասկերն ամենահարմարներն են կատարացիայի համար: Սակայն, ժամանակ չափելու համար, կատարացիան պետք է սկսել, հենց վոր հասկերի ծայրերն սկսում են դուրս գալ տերեվարներից:

Կատարացիան պետք է կատարել մինչև ցանքի մասսայական ծաղկման սկիզբը և վերջացնել, յերբ սկսվում է մասսայական ծաղկումը:

Ինչպէս ասացինք, կատարացիա արած հասկը պետք է ծաղկափոշի ստանա այլ բույսերից: Ուրեմն, անհրաժեշտ է, վորպեսզի կատարացիա արած հասկերի շուրջը ուրիշ բույսեր շատ լինեն: Իսկ վորպեսզի կատարացիա արված հասկն ամեն կողմից չըջապատված լինի բույսերով, միշտ պետք է կատարացիայի բույսերն ընտրել ցանքի ներսում, վորչ պակաս քան 10—15 մետր հեռավորութեան վրա ցանքի ամից: Կարող է պատահել, վոր ներսորտային խաչաձևման համար նախատեսված ցանքի կողքին ցանված լինի ցորենի մի ուրիշ սորտ:

Որինակ, վորոշված լինի ներսորտային խաչաձևվում կատարել «Ներնացեում»-ի ցանքում, վորի կողքին կա «Իելֆի»-ի ցանք, կամ վորոշված լինի ներսորտային խաչաձևվում կատարել և՛ «Ներնացեում»-ի, և՛ «Իելֆի»-ի այնպիսի ցանքերի մեջ, վորոնք իրար կպած են:

Այսպիսի դեպքում, յերբ «Ներնացեում»-ից կատարացիայի համար բույսեր ընտրվեն «Իելֆի»-ի ցանքից

շատ մոտ, ապա կարող են փոշոտվել «Իելֆի»-ի ծաղկափոշով, իսկ յեթե «Իելֆի»-ից կատարացիա արվեն բույսեր այնպիսի տեղում, վոր շատ մոտ են գտնվում «Ներնացեում»-ի ցանքին, ապա նրանք կարող են փոշոտվել «Ներնացեում»-ի ծաղկափոշով:

Այսպիսով, կկատարվի վոր թե ներսորտային, այլ միջսորտային խաչաձևվում, վորը մեր նպատակը չէ: Այսպիսի բան տեղի չունենալու համար, իրար կողքի ցանված ցորենի տարբեր սորտերի ցանքերի մեջ կատարացիայի հասկերը պետք է ընտրել ցանքերի սահմանից հետո: Որինակ՝ «Ներնացեում»-ից կատարացիայի համար բույսեր պիտի ընտրել այնպիսի տեղում, վորը «Իելֆի»-ի ցանքից հետո չի վրչ պակաս քան 100 մետր, նույնը պիտի անել «Իելֆի»-ից կատարացիայի բույսեր ընտրելու ժամանակ:

Գ. ՅՈՐԵՆԻ ՀԱՍԻԻ ԿԱՍՏՐԱՅԻԱՅԻ ՁԵՎԸ

Կատարացիայի համար պետք է ընտրել այնպիսի հասկեր, վորոնց առեչքները դեռ բոլորովին կանաչ են: Դրա համար պետք է ստուգել հասկի մեջ տեղի հասկիկների արտաքին ծաղիկներից մեկը, յերկուսը և յեթե այդ ծաղիկների առեչքները կանաչ են, ապա ուրեմն հասկը կարելի չէ կատարացիայի յենթարկել:

Հաճախ կատարատորը (այսինքն՝ կատարացիա կատարողը) լավ չի ստուգում առեչքների իսկ և հասած լինելը (իսկ առեչքը կանաչ է լինում, իսկ հասածը՝ դեղին) և սկսում է կատարացիա կատարել, բայց հանկարծ տեսնում է, վոր մի քանի ծաղիկների առեչքները բոլորովին հասած են, դեղնել են ու նրանց միջից ծաղկափոշի չէ թափվում: Ի՞նչ պիտի անի այս դեպքում կատարատորը. նա այս դեպքում պետք է այդ հասկը վոչնչացնի և ընտրի մի այլ հասկ, վորի առեչքները իսկ են: Կիսատ կատարացիա արած հասկերի վոչնչացնելն անհրաժեշտ է, քանի վոր յեթե այդ հասկերը մնան գաշտում, կարող են շիտթեցնել բերքահավաքի ժամանակ. ներսորտային խաչաձևվում

հասկեր հավաքողն այդպիսի հասկերը սխալմամբ կարող է ընդունել մարուք կատարացիա արած հասկերի տեղ, այսինքն ներսորտային խաչածեման միջոցով բեղմնավորված հասկերի տեղ: Իսկ այդպիսի շփոթության պատճառով ներսորտային խաչածեմումից ստացած սերմացուն կարող է խառնվել:

Նախքան բացատրելը, թե ինչ ձևով է կատարվում կատարացիան, շատ համառոտ տեղեկություն տանք այն գործիքի մասին, վորով կատարվում է այդ աշխատանքը: Այդ գործիքը կոչվում է պինցետ: Սա պատրաստված է յերկաթից կամ պողպատից: Թե ինչ ձևի գործիք է պինցետը -- ցույց է տրված № 7 նկարում:

Կատարացիա կատարելու ժամանակ պինցետը պետք է բռնել աջ ձեռքով:


Պետք է ասել, վոր պինցետի բռնելու ձևով մեծ նշանակություն ունի կատարացիան արագ ու վորակով կատարելու համար: Առհասարակ, ամեն մի կատարատոր ընտելանում է պինցետը վորևէ ձևով բռնելուն: Բայց կարելի չէ հաստատ ասել, վոր հասկի ծայրի ու հիմքի թույլ հասկիկները պոկելիս ավելի լավ է պինցետը բռնել այնպես, ինչպես բռնում են դանակը: Իսկ հասկիկների ներսի թույլ ծաղիկները յեմ առեջները պոկելիս՝ ավելի լավ է պինցետը բռնել այնպես ինչպես բրունում են մատիտը (նկ. 8 և 10):



Նկ. 7. Պինցետ

Պինցետն այս ձևով բռնելը հնարավորություն է տալիս արագ աշխատելու: Որինակ, յերբ ուզում ենք պոկել հասկի հիմքի թույլ հասկիկները, պինցետով բռնում ենք ամեն մի առանձին հասկիկը և ներքեմ ծռելով՝ ձգում: Այս դեպքում հասկիկը շատ հեշտ է պոկվում:

Հասկի ծայրի թույլ հասկիկներն առանձին-առանձին չենք պոկում, այլ միասին, միանգամից: Սրա համար վորոշում ենք, թե քանի՞ հասկիկ պիտի պոկենք հասկի ծայրից: Յենթադրենք, թե պետք է պոկենք հասկիկ. այս դեպքում, 4-րդ հասկիկի (վերևի ծայրից հաշված) հիմքի սահմանում պինցետով ամուր



Ն 8. Հասկիկներն ներսի թույլ ծաղիկները հանելու ձևը:

բանում ենք հասկի կոթունը և, ծակով ներքեղ, ձգում ենք վերեղ:

Այս ձևով հասկիկի ծայրը հեշտությամբ պոկվում է:

Հասկը կատրացիա անելու ժամանակ շատ կատրատորներ պահում են նաև հասկի քիտները, թեև այս բանն անհրաժեշտ չէ:

Պետք է տեսլ, վոր քիտներն էլ կարելի է հեշտությամբ պոկել պինդեամով: Մրա համար պինդեամով պետք է բռնել դույզ-դույզ կանգնած քիտների հիմքից և քիտները շատ արագ ներքեղ ծռելով՝ ձգել վերեղ: Այս ձևով քիտները շատ հեշտությամբ պոկվում են:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր պինդեամբ շատ հասարակ ու միաժամանակ շատ հարմար գործիք է հասկի կատրացիան արագ կերպով ու բարձր վորահով կատարելու համար:

Կատրացիա անելու ժամանակ հասկը պետք է բռնել ձախ ձեռքի մատների ծայրերով (նկ. 10), բայց պետք է բռնել այնպես, վոր հասկը բոլորովին չսեղմվի: Յերբեք չի կարելի հասկը սեղմել. սեղմելու հետեվանքով կարող են արորվել և փչանալ ծաղկի վարսանդն ու սպին, վորի պատճառով բեղմնավորութուն չի կատարվի, և կատրացիա արած հասկը նորմալ կերպով հատիկներ չի բռնի:

Չի կարելի հասկը ծալել, չի կարելի ծալել նաև ցողունը. հասկը կամ ցողունը ծալելու հետեվանքով սննդատար անոթները կտրվում են յեղ տվյալ ցողունի վրա դոնդիպ հասկը սնունդ չի ստանում ու չորանում է:

Ցողունը չկտրելու համար կատրատորը բույսից մի քիչ հեռու պիտի նստի և ցողունը վոր թե ծալի, այլ առանց ծալելու թեքի գեպի իրեն: Ինչքան բարձր են ցողունները, այնքան հեռու պետք է նստել բույսից:


Կատրացիայի համար համապատասխան հասկ

ընտրելուց հետո ամենից առաջ պետք է պոկել ու դնել զցել հասկի ծայրի ու հիմքի թույլ հասկիկները և հասկի մնացած մասի հասկիկները միջին ծաղիկները (նկ. 10): Այսպիսով, հասկից մնում են նրա միջին հասկիկները արտաքին ծաղիկները, վորոնք ամենալավ զարգացած ծաղիկներն են: Հասկն այս ձևով նախապատրաստելուց հետո կարելի յե կատրացիան կատարել:

Կատրացիայի համար պատրաստ հասկը, ինչպես վերեղում ասացինք, պետք է պահել ձախ ձեռքի մատների ծայրերով: Ինք մատով ու ցուցամատով պետք է բռնել այն հասկիկի վերեղից, վորի ծաղիկները միջից պիտի հեռացվեն առեչքները: Այս հասկիկները պետք է լինեն բույս մատից և ցուցամատից ցած և պիտի հենվեն միջին կամ մատանու մատին: Այս հեն-



10



F

Նկ. 9. ա. Հասկիկի ձևը, բ. Հասկիկի ձևը՝ ներսի թույլ ծաղիկներից հանելուց հետո, գ. Հասկիկային թեկուկ: զ. Ծաղկի արտաքին թեկուկը, յե. Ծաղկի ներքին թեկուկը:

Պինցեաւ ուղնում և առեջքները հեշտութեամբ հանելուն:

Առեջքները ծաղկի միջից հանելու համար պետք է պինցեաւի ծայրերը միացնել իրար և զգուշ մտցնել ծաղկիկային թեփուկների արանքը ու յերբ պինցեաւի ծայրերը ծաղկիկային թեփուկների արանքումն են, բաց անել նրանց: Պինցեաւի ծայրերը չի կարելի շատ



Նկ. 10: Առեջքները հանելու ձևը

բաց անել: Պինցեաւի ծայրերը շատ բաց անելու հետևանքով ծաղկիկային թեփուկներն իրարից շատ հեռանալով կոտրվում են, վորի հետևանքով վնասվում է նաև վարանդը:

Յերբ ծաղկիկային թեփուկները մի քիչ հեռացվում են միմյանցից, նրանց արանքում յերեւում են առեջքները և վարսանդն իր սպիտով: Պարզ կերպով փնտնելով առեջքները, պետք է պինցեաւով բռնել նրանց վերեվի ծայրերից յեվ հանել: Առեջքները պիտի բռնել զգուշ, առանց անցմելու: Սեղմելու դեպքում նրանց ծայրերն ուղղակի կտրվում են, և կատարատորը փոխանակ ամբողջ առեջքները հանելու, հանում է նրանց կոտորների և ստիպված է լինում ծաղկի մեջ մնացած առեջքների կոտորները փնտնելու:

Ինչպես արդեն ասել ենք, ցորենի յուրաքանչյուր ծաղկի մեջ լինում է 3 հատ առեջք: Արևմտ, կատարատորն ամեն մի ծաղկի միջից պիտի հանի 3 հատ առեջք: Ամեն մի ծաղկից առեջքները հանելիս պիտի հաշվել: Շատ հարմար է լինում, յերբ կատարատորը համար առեջքները դնում է բուխ մասի յեղանակի կամ հենց նույն մասի, կամ ձեռքի վրա: Սա հնարավորութեան է առիտ արագ կերպով ստուգելու, թե քանի՞ առեջք է հանված՝ յերեք, թե՞ պակաս:

Հաճախ պատահում է, վոր կատարատորը ծաղկի միջից հանում է մի հատ ամբողջ առեջք և մեկի կեսը: Սա նշանակում է՝ ծաղկի մեջ դեռ կա ելի մի ամբողջ առեջք և մեկի կեսը, վորը, ի հարկե, պետք է նույնպես հանել: Ինչ չի պատահում նաև, յերբ կատարատորը հանում է յերկու ամբողջ առեջք և մեկի կեսը: Պարզ է, վոր նա առեջքներից մեկը կիտել է և առջ կեսը թողել է ծաղկի մեջ, ուրեմն պիտի հանի նաև առջ կես առեջքը:

Վորպեսզի կատարատորն իմանա, թե ինչքան ամբողջ առեջքներ է հանել, թե կիսատ, պետք է յավելեանա առեջքի ձևը: Նա պետք է մի առեջք զգուշ հանի, ուսումնասիրի նրա ձևով և այնուհետև կարող

և հեշտութեամբ վորոշել, թե իր հանածն ամբողջա-
կամ անհատն է, թե՞ անհատն է:

Պետք է ասել, վոր կատարացիա անելը հեշտ աշ-
խատանք է: Յերբ կատարատորը վարժվում է աշխա-
տանքի մեջ, նա կարողանում է պինդեւոր շատ արագ
մտայնել ծագկի թեփուկների արանքը և համար-
յա թե միշտ յերեք ատեղներն ել միանգամից հանել:

Մենք ստացինք, վոր ատեղները հանելու ժամանակ
պինդեւոր պիտի բռնել նրանց վերնիլի ծայրերից: Սա-
նրա համար է. վորպեսզի պինդեւոր ծայրերը չկպչեն
սպիկն: Ահա ստարակ զգուշը պիտի լինել, վորպեսզի
կատարացիայի ժամանակ վարանդն ու սպին չլնա-
վեն:

Սակայն միայն վարանդն ու սպին չեն, վոր պետք
է անպիտա մնան. անպիտա պետք է մնան նաև
հասկիկային յեւ ծաղկիկային թեփուկները: Պին-
դեւոր ծայրով շարտի ծակիկէլ ու բրբրել հա-
կիկային կամ ծաղկիկային թեփուկները,
այդ բանի հետեւանքով հասկը կարող է շորանալ կամ
թիթի հատիկներ չբռնել:

Կատարացիա անելու ժամանակ պետք է ուշադիր
լինել, վորպեսզի վորեւէ հասկիկէլ, կամ վորեւէ ծաղ-
կի մեջ ատեղներ չմնան: Իրա համար հասկի ծա-
ղիկների միջից ատեղները պիտի հանել վորոշ հաջոր-
դականութեամբ, վորոշ կարգով:

Կատարացիան պետք է սկսել հասկի հիմքից և յե-
թե ատոյ կատարացիա յե արվում ներքեի հասկիկէլ աջ
կողմի ծաղկից, հետո ձախը, ապա հաջորդ հասկիկէլ
կատարացիան ել պիտի անել այդ կարգով, այսինքն՝
դարձյալ ատոյ աջը, հետո ձախը, ու այդպէս մինչև
հասկի ծայրը:

Յեթե կատարացիան սկսում է հասկիկէլ ձախ ծաղ-
կից, ապա այդ կարգով ել պետք է դնալ մինչև
հասկի ծայրը:

Կարելի չէ նաև կատարացիա անել նախ բոլոր հա-
կիկների ամ կողմի ծաղիկները, հասկի հիմքից մինչև
ծայրը, հետո ել ձախ կողմի ծաղիկները: Հասկի մի

յերեսի հասկիկէլների կատարացիան պիտի վերջացնել և
4եան սկսել մյուս յերեսի վրա շարունակ հասկիկէլների
կատարացիան:

Դ) ՅՈՐԵՆԻ ԿԱՍՏՐԱՅԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յորենի կատարացիան պարզ ու հեշտ աշխա-
տանք է: Յուրաքանչյուր կոլտնտեսական 2—3 ժամվա
ընթացքում կարող է վարժվել այդ աշխատանքին:
Վարժված կատարատորը մի ժամվա ընթացքում կա-
րող է կատարացիա անել 15—20 հասկ: Հետեւապէս,
մի հոգին, որական 6 ժամ աշխատելու դեպքում, կա-
րող է կատարացիայի յենթարկել 90—120 հասկ:

Սա նշանակում է, վոր յեթե կոլտնտեսութեան
ունենա 10 հոգի կատարացիա անող, ապա 5 որվա ըն-
թացքում կարող է կատարացիա անել 4500—ից մինչև
6000 հասկ: Յեթե հաշվենք, վոր ամեն մի հասկից
կատարողի միջին հաշվով 15 հատիկ, ապա կոլտնտե-
սութեանը կատան 67,500—ից մինչև 90,000 հատիկ:
Յոտավորապէս 30,000 հատիկի քաշը կազմում է մեկ
կիլոգրամ: Ուրեմն, կոլտնտեսութեանը, այսպիսի աշ-
խատանք կատարելու դեպքում, կատանա 2 կիլոգրա-
մից մինչև 3 կիլոգրամ ցորեն:

Ներսորտային խաչածեւում կատարելու համար
ամենահիմնական խնդիրը վորակյալ կատարատորներ
ունենալն է: Յուրաքանչյուր կոլտնտեսութեան վար-
չութեան պետք է նախորոք նշանակի 15—ից մինչև
20 հոգի, վորոնք պետք է կատարեն ցորենի ներսոր-
տային խաչածեւումը:

Փորձը ցույց է տվել, վոր զպրոցական աշակեր-
տները, վորոնց տարիքը հասնում է 14—ից մինչև 16—ի,
17—ի, ասկիլի լավ են կատարացիա կատարում, քան թե
մեծահասակները: Պետք է ասել, վոր աղջիկներն ավելի
լավ են կատարացիա անում, քան թե տղաները: Սա-
կայն անհրաժեշտ է այդ զիտի հասակ ունեցողների հե-
ռանկալ 2 կամ 3 հոգի չափահաս կոլտնտեսականներ,

վորոնք կազմակերպեն և ղեկավարեն աշխատանքը:

Կոլտնտեսութեան վարչութիւնը պետք է 2-ից 3 հոգի ուղարկի վորեն տեղ ցորենի կատարացիա սովորելու համար (կամ գյուղատնտեսի մաս, կամ վորեն հարեան կոլտնտեսութիւն, վորտեղ դիտեն կատարացիա անելը, կամ համապատասխան կուրսեր):

Պետք է ուղարկել այնպիսի ընկերներին, վորոնք միանգամայն համապատասխան են այս գործի համար և սիրում են այն: Յեթե խրճիթ-լաբորատորիայի վարչը կարող է այսպիսի աշխատանք կատարել, սիրում է այսպիսի գործը, ապա ամենից առաջ նրան պետք է ուղարկել սովորելու: Յեթե կոլտնտեսութեան մեջ կան ագրոտեխնիկներ, ապա առաջին հերթին պիտի ուղարկել նաև նրանց: Իսկ յեթե կոլտնտեսութիւնում չկա վոչ խրճիթ-լաբորատորիայի վարիչ, վոչ ագրոտեխնիկ, այդ դեպքում պետք է կոլտնտեսականներից ընտրել համապատասխան մարդիկ և ուղարկել սովորելու:

Այս ընկերները, սովորելով, կդառնան կատարացիայի հրահանգիչներ: Այս հրահանգիչները դնալով կոլտնտեսութիւն, իրենց հերթին պետք է սովորեցնեն այն 15—20 հոգուն, վորոնց կոլտնտեսութիւնը նշանակած կլինի ներսորտային խաչաձևումը կատարելու համար:

Ի՞նչպես պետք է կատարատորներ պատրաստել կոլտնտեսութիւնում: Կատարացիայի հրահանգիչները կոլտնտեսութեան վարչութեան կողմից նշանակված ընկերներին պետք է տանեն այն ցանքը, վորը նախատեսված է ներսորտային խաչաձևվման համար և սովորեցնեն կատարացիա կատարելը: Կատարացիան սովորեցնելու համար չպետք է ընտրել ցանքի ամենալավ մասը, կամ ամենալավ բույսերը, այլ պետք է ընտրել ցանքի վատ մասը և վատ բույսերը: Թե ինչու պետք է այսպես անել, պարզ է. վարժութեան համար կատարացիա արած հասկերը պետք չեն, սովորողներն անվարժ լինելու հետևանքով փչացնում են վորոչ քանակութեամբ բույսեր: Այսպիսի կորուստն ավելի բավ

է տեղի ունենա ցանքի վատ մասում, քան լավ մասում:

Սովորեցնելու ժամանակ հրահանգիչներին ամեն մեկը պետք է հավաքի իր շուրջը 6—7 հոգի և ցույց տա նրանց, թե ի՞նչպես բռնել պինցետը, ի՞նչպես պետք է ընտրել հասկը, ի՞նչպես պետք է բռնել հասկը կատարացիայի ժամանակ, ի՞նչպես պիտի նախապատրաստել հասկը կատարացիայի համար և ի՞նչպես կատարել կատարացիան: Հրահանգիչները պետք է բացատրեն հասկի կազմութիւնը, սովորեցնեն, թե վորն է հասկիկը, ծաղիկը հասկիկային ու ծաղկային թէփուկը և այլն: Մի խոսքով՝ սովորողին պետք է սովորեցնել այնքան բան, ինչքան այս սրբույթում սովորած է կատարացիա կատարելու ձևի մասին:

Կատարացիա սովորողները ծանոթանալով կատարացիայի ձևին, պետք է սկսեն վարժվել, պետք է կատարեն վարժական կատարացիա, վորի ընթացքում հրահանգիչները պետք է մոտենան ամեն մեկին և ոգնեն ու ստուգեն նրա աշխատանքը: Վարժական կատարացիան շատ կարևոր է, և հրահանգիչները պետք է հսկեն, վորպեսզի սովորողները յուրացնեն կատարացիայի ձևը, վարժվեն և դառնան կատարատորներ:

Հրահանգիչները պետք է հետևեն, թե սովորողներից ո՞վ է արդեն յուրացրել կատարացիայի ձևը, ո՞վ է կարողանում կատարացիա կատարել այնպես, ինչպես պահանջվում է այդ: Յերբ սովորողը յուրացնում է կատարացիայի ձևվը, այսինքն դառնում է կատարատոր, հրահանգիչը պետք է նրան փոխադրի ցանքի այն մասը, վորտեղ պետք է կատարվի արտադրական կատարացիան, այսինքն այն կատարացիան, վորը պետք է վոչ թե վարժվելու, այլ ներսորտային խաչաձևվման համար:

Հրահանգիչը պետք է մի բան շատ լավ իմանա, վոր ինքը պետք է թույլ տա սովորողին արտադրական կատարացիա կատարելու միայն այն ժամանակ, յերբ նա կատարելապես տիրապետել է կատարացիայի տեխ-

ներկային, յերբ դարձել է վորակյալ կաստրատոր:

Յերբ կաստրատորն սկսում է արտադրական կաստրացիա կատարել, հրահանգիչը պետք է նրան ելք մի քանի անգամ ստուգի, վորպեսզի վերջնականապես համոզվի, թե կաստրատորն անխալ է աշխատում:

Կաստրացիա արած հասկերը պետք է նշանակել վորեւէ աչքի ընկնող գույնի շորով կամ թելով: Ամենահարմարը վառ կարմիր գույնի շորը կամ թելն է, քանի վոր այս գույնը շատ լավ է աչքի ընկնում ցորենի հասած ցանքի մեջ: Շորի կտորը կամ թելը պետք է կապել կաստրացիա արած հասկի ցողունին, անմիջապես հասկի տակը, կամ հասկից քիչ ցած:

Հրահանգիչը պետք է ամեն որվա աշխատանքի վերջում ստուգի կաստրատորների աշխատանքի վորակը և հաշվի, թե նրանցից ամեն մեկը քանի՞ հասկ է կաստրացիա արել: Բոլոր կաստրատորների կաստրացիա արած հասկերի թիվը պետք է կանոնավոր կերպով հաշվել ու գրանցել: Հաշվողն ու գրանցողը պետք է լինի կամ հրահանգիչը կամ խրճիթ լաբորատորիայի վարիչը, կամ բրիգադիրը: Այս հաշվառումն անհրաժեշտ է նախ նրա համար, վորպեսզի պարզվի, թե ամբողջ աշխատանքի ժամանակ ընդամենը քանի՞ հասկ են կաստրացիա արել բոլոր կաստրատորները և ապա աշխուրները կանոնավոր գրանցելու համար:

Կաստրացիա արված հասկերի թիվը հաշվի առնողն ու գրանցողը պետք է ունենա մի հատուկ տետր, վորի մեջ յուրաքանչյուր կաստրատորին պետք է հասկացնի մի եջ և այդ եջում գրանցել կաստրացիա արած հասկերի թիվը և կաստրացիայի վորակը: Միաժամանակ այս տետրում պետք է գրանցել, թե ի՞նչ սորտի ցորեն է կաստրացիա արված և վոր ցանքում կամ վոր դաշտում:

Հաշվառման ժամանակ աշխատանքի վորակը պետք է անպայման նշել: Վորակը նշանակելու ժամանակ պետք է հաշվի առնել, թե կաստրատորը հասկի հետ իննամբո՞վ է վարվել, թե՞ ծակծկել է ու քրքրել պինցետով, մի հասկի վրա քանի՞ հասկիկ է թողել, շո՞տ

թե՞ քիչ, թույլ հասկիկները հեռացրե՞լ է թե՞ թողել է, վոր ամենից կարևորն է, արդյոք ծաղիկների մեջ առեչքներ կամ առեչքների կտորներ չի՞ մոռացել:

Յորեմի հասկերի կաստրացիայի եաշվառման ձևվը

Փամանակ	ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԱՐԳԻՍ				Փամանակ	ՍԳԿԱՐՅԱՆ ԱՆՍՆԻՏ			
	Յորեմի սորտը	Կաստրացիայի քանակ	Աշխատանքի քանակ	Վորակ		Յորեմի սորտը	Կաստրացիայի քանակ	Աշխատանքի քանակ	Վորակ
5/7	Սպիտակահատ	100	միջակ		5 7	Սպիտակահատ	100	միջակ	
6/7	»	110	լավ		6/7	»	116	լավ	
7/7	Թուրքիցեպս	120	լավ		7/7	Թուրքիցեպս	126	լավ	

Կաստրատորի աշխուրի նորմայի հարցը պետք է քննության առնվի կոլտնտեսության վարչությունում: Հարցը քննելու ժամանակ նկատի պիտի առնել, վոր անչափահաս կոլտնտեսականն որական 6 ժամ աշխատելու դեպքում կարող է կաստրացիա անել 80-ից մինչև 100 հասկ: Յեղնելով սրանից, 100 հասկը կարելի չէ հաշվել մեկ աշխուր: Միաժամանակ հաշվի պետք է առնել աշխատանքի վորակը: Լրիվ աշխուր պետք է տալ միայն այն դեպքում, յերբ կաստրատորը կաստրացիա յե արել 100 հասկ, և աշխատանքի վորակը լավ է, կամ գերազանց: Միջակ աշխատանքի դեպքում աշխուրը 20 տոկոսով պետք է պակասեցնել: Վատ վորակով կատարված աշխատանքը չպետք է ընդունել:

ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱՉԱՁԵՎՎԱԾ ՀԱՍԿԵՐԻ ՀԱՎԱ
ՔՈՒՄՐ

Ներառրտային խաչաձեվման համար կաստրացիա արած հասկերը պետք է հավաքել ամենամեծ իննամբո՞վ և առանց վորեւէ կորստի: Սրա համար կաստրա-

ցիայի ժամանակ պետք է նշանակել և՛ հասկերը, և՛ հասկերի տեղը: Հակառակ դեպքում, ցանքի ամբողջ մասսայի մեջ չափազանց դժվար կլինի գտնել կատարացիա արած հասկերը: Այնքան ել հեշտ չի լինի դրտնել նաև ցանքի մեջ այն տեղը, վորտեղ կատարվել է հասկերի կատարացիան: Նա, ով պիտի հավաքի հասկերը, պետք է աշխատի հիշել հասկերի տեղը, ոգտագործելով այն նշանները, վորոնք կարող են լինել ցանքի մեջ, կամ ցանքի կողքին (ծառ, թուփ, քար, ստուռ և այլն):

Կատարացիայից 5—6 որ հետո պետք է ստուգել, թե արդյոք հասկերը բռնե՞լ են, թե՞ վոչ: Այս բանը շատ հեշտ է ստուգել. յերբ հասկերը հատիկներ են բռնում, նրանց ծաղկային թեփուկներն ամբանում են և փակվում. իսկ յերբ հասկերը հատիկներ չեն բռնում, նրանց ծաղկային թեփուկները թույլ են մնում, չեն փակվում, չուվում են, և հասկն ել թողնում է չորացած հասկի տպավորութուն:

Յեթե կատարացիա արած հասկերի ստուգումից պարզվում է, վոր աշխատանքն անհաջող է կատարված, ապա պետք է աշխատել գտնել մի այլ ցանք, վորտեղ հնարավոր է լրացուցիչ կատարացիա կատարել: Իսկ Հայաստանի պայմաններում այս բանը հնարավոր է, քանի վոր ցանքերը գտնվելով տարբեր գոտաններում, բլուրների ու լեռների տարբեր թեքութունների վրա, հասունանում են տարբեր ժամանակ:

Ներսորտային խաչաձեված հասկերը պետք է հավաքել բերքահավաքից 1—2 որ սուաջ: Դրա համար խրճիթ—լարորտատրիայի վարիչը կամ նա, ում հանձնարարված է հավաքել հասկերը, պետք է տեղյակ լինի, թե յե՛րբ է հնձվելու այն ցանքը, վորտեղ կատարվել է ներսորտային խաչաձեվումը: Հաճախ որտես հոսում է, վոր կոլտնտեսութունը բերքահավաքը կատարում է ցանքի հասունանալուց մի քիչ շուտ: Որինակ՝ «Ուկրաինկա» ցորենի ցանքերը հնձում են

արեւ հասունացումից մի քիչ առաջ, յերբ բույսերը դեռ ամբողջովին չեն դեղնել: Հունձն այսքան շուտ են կատարում այն պատճառով, վոր «Ուկրաինկան» շատ թափվող ցորեն է և շատ հասունանալու, չորանալու դեպքում: շատ է թափվում: Ահա այս դեպքում, այսպիսի յերբ ցորենի ցանքը հնձում են լրիվ հասունացումից մի քիչ առաջ, պետք է ներսորտային խաչաձեված հասկերը հավաքել հնձից 1—2 որ սուաջ:

Տարբեր սորտերի ներսորտային խաչաձեված հասկերը պետք է հավաքել առանձին—առանձին. որինակ՝ չի կարելի «Դեյֆի»-ի հասկերը խառնել «Մպիտակահատի» հասկերին, կամ «Ռուբրիցեպսինը» «Երինացեումին»:

Ցանքի միջից հավաքելով ներսորտային խաչաձեված բոլոր հասկերը, պետք է նրանց միացնել և մի խուրձ կազմել: Հասկերը հավաքելու ժամանակ նրանց ցողունները պետք է յերկար լինեն, վորպեսզի խուրձը 4եշտությամբ և լավ կազմի: Այս խրճիթ պետք է կապել ետիկետ, այսինքն՝ մի թուղթ, վորի մեջ դրանց վամ պետք է լինի ավյալ շրջանի, գլուղի և կոլտնտեսության անունները, ցորենի սորտի անունը և ցանքի մի 4եկտարի բերքատվութունը:

Ներսորտային խաչաձեված հասկերը հավաքելուց անմիջապես հետո չպետք է փշելել, յեթե շտապելու կարիք չկա: Մեր լեռնային շրջաններում (Մարտաշի, Բայազետ, Ախտա և այլն) ցորենը հաճախ ուշ է հասնում և շատ քիչ ժամանակ է մնում մինչև աշուն ցանքը: Այս դեպքում, չենց վոր ցորենը հնձում են, կարող են ու ստացած սերմացուն ցանում: Այսպիսի սերմացուն չի կարող բարձր վորակ ունենալ: Բարձր վորակ կարող է ունենալ այն սերմացուն, վորը միանգամայն հասունացած է, բայց ժամանակը վորը միանգամայն հասունացած է, շտապում են ցանել յեղած սերմացուն:

Ահա այս դեպքում, յերբ վոր քիչ ժամանակ է մնում մինչև ցանելը, ի՞նչպես վարվել ներսորտային

խաչածեղած հասկերի հետ: Պետք է նույնպես ցանել: Միայն թե լավ կլինի, յեթե մինչև ցանելն այս հասկերի խուրճերը մի քանի որ դրվեն արևի տակ, չսրացվեն և հետո փշրվեն ու ցանվեն:

Մնացած վոչ լեռնային շրջաններում, վորակող հնձից մինչև ցանելը շատ ժամանակ կա, յեբքեք չպետք է շտապել հասկերը փշրելու համար: Գարնանացան ցորենների հասկերը փշրելու համար չպետք է շտապել վոչ լեռնային և վոչ ել մյուս շրջաններում: Պետք է թողնել, վոր քաղած հասկերը միանգամայն չորանան և նոր միայն փշրել:

Փշրելու աշխատանքը պետք է կատարել շատ խնամքով: Վոչ մի դեպքում տարբեր սորտերը միմյանց չպիտի խառնել: Սրա համար յուրաքանչյուր խուրճ պետք է փշրել առանձին:

Յեթե խուրճը փշրվում է սեղանի կամ վորեկ տախտակի կամ շորի վրա, ապա հաջորդ խուրճը փշրելուց առաջ այս տեղը պետք է շատ մեծ ուշադրությամբ մաքրել, վորպեսզի նախորդ խրճից հատիկ չմնա և չխառնվի նոր խրճի հատիկներին:

Խուրճը փշրելուց առաջ պետք է ստուգել, թե արդյո՞ք մեջը ցորենի ուրիշ սորտի խառնուրդ չկա: Յեթե կա, պետք է հեռացնել: Ի հարկե, յեթե խաչածեղած մը կատարվել է պոպուլացիայի մեջ, ապա խրճերի գոտաորտությունը պետք է ստուգել:

Բացի այդ, պետք է ստուգել, թե արդյոք վերցրած խրճի մեջ քարամրիկով հիվանդ հասկեր չկա՞ն: Յեթե արդպիտի հասկեր կան, ապա դրանց պետք է առանձնացնել և վառել: Մրիկով հիվանդ հասկերը պետք է փնտռել շատ մեծ զգուշությամբ, դռնել յեվ հեռացնել: Հակառակ դեպքում, խաչածեղած հասկերի հատիկները կվարակվեն քարամրիկով, վորը հետո շատ մեծ վնասներ կարող է պատճառել: Յեթե անզգուշության պատճառով ներսորտային խաչածեղած հասկերի հատիկները վարակվեն քարամրիկով, ապա այդ դեպքում հատիկները պետք է անպայման ախտահանել թաց ախտահանումով (Փորձալինով):

Ներսորտային խաչածեղած հասկերից ստացված հատիկները պետք է պահել առանձին տոպրակները մեջ: Յուրաքանչյուր տոպրակի մեջ պետք է դնել նաև այն հատիկաը, վորի մեջ գրված է տվյալ շրջանի, գյուղի, կոլտնտեսության անունները, ցորենի սորտի անունը և ցանքի մեկ հեկտարի բերքատվությունը:

Այս հատիկատի մեջ պետք է նշանակել նաև ՆՍԽ-Թ: ՆՍԽ-նշանակում է ներ-սորտային-խաչածեղում, իսկ Թ-ն նշանակում է, վոր տվյալ սերմացուն ներսորտային խաչածեղումից ստացված առաջին սերմացուն է: Յերբ այդ սերմացուն ցանվի և այդ ցանքը սերմացու տա, այն ժամանակ հատիկատի վրա կնշանակվի ՆՍԽ-1, այս ել վոր ցանվի ու ելի սերմացու տա, հատիկատի վրա կնշանակվի ՆՍԽ-2 և այսպես շարունակ, տարեցտարի կնշանակվեն ներսորտային խաչածեղման սերմացույի սերունդները— ՆՍԽ-3, ՆՍԽ-4, ՆՍԽ-5, ՆՍԽ-6 և այլն:

Ետիկետն անհրաժեշտ է և միշտ պետք է գրել: Ետիկետի ձևը հետևյալն է.

Շրջան
Գյուղ
կոլտնտեսություն
Ցորենի սորտի անունը
Ցանվի մի հեկտարի բերքատվությունը
ՆՍԽ—
Ետիկետը կազմողի ստորագրությունը

Այս հատիկատի ձեվը շատ պարզ է և ամեն մի խրճիթ-լորտաատորիայի վարիչ, ամեն մի բրիգադիր, ամեն մի գրադետ կոլտնտեսական կարող է լրացնել: Բայց քանի վոր այս հատիկետը զոկումենտ է, ապա պետք է վոր նրա լրացնողը լինի կամ խրճիթ-լորտատորիայի վարիչը, կամ բրիգադիրը:

**ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱՀԱՃԵԼՈՒՄԻՑ ՄՏԱՑՎԱԾ ՍԵՐՄԱ-
ՑՈՒՑԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ**

Ներսորտային խաչաձևումից ստացված սերմացուն պետք է բազմացնել ամենաարագ կերպով: Այնքան արագ պիտի կատարել այդ սերմացունի բազմացումը, վոր հնարավոր լինի 3—4 տարվա ընթացքում կոլտնտեսութան ամբողջ հին սերմացուն փոխարինել նորով: Որինակ՝ յեթե ներսորտային խաչաձևվումը կատարվում է 1939 թ., ապա այնպես պետք է անել, վոր կոլտնտեսութան բոլոր հողերը 1941 կամ 1942 թվին ցանվեն ներսորտային խաչաձևվումից ստացված սերմացուով:

Սերմացույի արագ բազմացման միջոցը լայնաչարք ցանքն է, վորը կիրառել է Ողեսսայի Գենետիկայի յեվ Սելեկցիայի ինստիտուտը: Ճիշտ է, դեռ մինչև այժմ էլ ճշտված չե, թե տարբեր պայմաններում ի՞նչ լայնութուն ունեցող չարքերով պիտի ցանել սերմացուն, բայց մի բան լավ հայտնի չե, վոր լայնաչարք ցանքի սխտեմն արագացնում է սերմացույի բազմացումը:

Ողեսսայի Գենետիկայի և Սելեկցիայի ինստիտուտը 1936—1937 թ. թ. ներսորտային խաչաձևումից ստացված ցորենի ցանքը կատարում եր լայն չարքերով: Շարքերի լայնութունը թողնվում եր 60—65 սանտիմետր և հատիկի հեռավորութունը հատիկից՝ 20—30 սանտիմետր:

Այսպիսի ցանքի դեպքում ցորենի մի հատիկն ստանում եր 600-ից մինչև 900 քառակուսի սանտիմետր տարածութուն: Հասկանալի չե, վոր այսպիսի ցանքը հնարավորութուն է տալիս բույսին ստանալու ուժեղ սնունդ: Սովորական ցանքի ժամանակ այդպիսի տարածութան վրայի բույսերի թիվը լինում է 150-ից մինչև 300: Այսպիսի ուժեղ սնունդի հետևանքով բույսը շատ ուժեղ թփակալում եր և տալիս էր մինչև

100, իսկ հաճախ ել :100-ից ավելի հասկ (նկ. 11), Մի հեկտարի վրա ցանվում է 2 կելոգրամ սերմա-



Նկ. 11. Ցորենի բույսի ուժեղ թփակալումը լայնաչարք ցանքի դեպքում.

ցու և ստացվում է մինչև 20 ցենտներ և նույնիսկ ավելի բերք: Պարզ է, վոր այո ձեւը շատ արագացնում էր սերմացույի բազմացումը: Մակայն այո ձեւի ցանքից ստացված հատիկները լինում են մանր: Այսպիսի մանր հատիկներ ստանալը բացատրվում է նրանով, վոր ուժեղ թփակալած բույսի ցողուններն իրենց շատության հետեւանքով բավարար քանակությամբ սնունդ չեն ստանում արմատներից, արմատները չեն կարողանում այդքան սնունդ հասցնել և, դրա հետեւանքով, այդպիսի բույսի տված հատիկները լինում են մանր: Ներկայումս, Հենց Ողեսասայի Սելեկցիայի և Փենետիկայի ինստիտուտի նախաձեռնությամբ, ուսումնասիրվում է այն հարցը, թե ինչպիսի լայնություն ունեցող շարքերով ցանել ցորենը և հատիկը հատիկից ինչքան հեռու, վորպեսզի ստացվեն վոչ մանր հատիկներ: Այս հարցը Հայաստանի պայմանների համար ևս պարզված չէ: Բայց կարելի չէ ասել, վոր յեթե Հայաստանի պայմաններում ցորենը ցանվի 20 սմ. լայնություն ունեցող շարքերով և հատիկը հատիկից 15 սանտիմետր հեռավորության վրա, ապա կստացվի լավ արդյունք: Այսպիսի ցանքի դեպքում կարագանա սերմացույի բազմացումը և միաժամանակ հատիկները մանր չեն լինի: Եթե սերմացույի բազմացման առաջին տարում ցանքը կատարվի վերեվում նշված նորմայով, այսինքն՝ 20 սանտիմետր լայնություն ունեցող շարքերով և հատիկը հատիկից 15 սմ. հեռավորության վրա, ապա կոլտնտեսությունը 3 կիլոգրամ սերմացու ունենալու դեպքում կարող է ցանել մոտավորապես մի ջանորդ հեկտար տարածություն: Այդպիսի տարածությունից կստացվի 5 ցենտների չափ սերմացու: Երկրորդ տարում այդ սերմացույով կարելի չէ ցանել մոտ 10 հեկտար տարածություն, վորը կտա մոտ 150 ցենտներ բերք: Երրորդ տարում կոլտնտեսությունն այդ սերմացույով կարող է ցանել մոտավորապես 100 հեկտար տարածություն: Սա նշանակում է, վոր չորրորդ տարում, ամենաշատ ցանք ունեցող կոլտնտեսությունը,

անգամ, ապահովված կլինի ներսորտային խաչաձեւած սերմացույով: Իսկ օա իր հերթին նշանակում է, վոր ներսորտային խաչաձեւվում կատարելուց չորս տարի հետո, կոլտնտեսությունն իր ցորենի ցանքերի յուրաքանչյուր հեկտարից կստանա 1-ից մինչև 4 ցենտներ լրացուցիչ բերք:

Ներսորտային խաչաձեւվումից ստացված սերմացույի այսքան արագ բազմացումը պահանջում է բարձր պզրոտեխնիկա: Ամենից առաջ անհրաժեշտ է, վոր պետի ներսորտային խաչաձեւումից ստացված սերմացույի բազմացման համար հտոկացվի բարձր վորակ ունեցող հողամաս: Այս հողամասը պետք է լինի մեծ խնամքով մշակված և պարարտացված, միաժամանակ ապահովված պիտի լինի ջրով:

Վերևում ասացինք, վոր ներսորտային խաչաձեւած սերմացույն պետք է ցանել լայնաշարք ձեւով (շարքերի հեռավորությունը միմյանցից 20 սմ. և հատիկների հեռավորությունը շարքում՝ 15 սանտիմ.) : Այսպիսի ցանքը կատարվում է ձեռքով: Հատիկները պետք է ցանել հատ-հատ: Յանքը կատարելու համար պետք է պատրաստել մարդեր:

Մարդերի լայնությունը պետք է հարմարեցնել ջրելուն, այսինքն այնպես պիտի քաշել մարդեր, վոր նրանք հեշտ ու համահավասար կերպով ջրվեն: Միաժամանակ նկատի պետք է ունենալ, վոր ցորենի շարքերի լայնությունը 20 սմ. է: Ուրեմն, մարդի լայնությունը պետք է ընել այնքան, վոր հարմար լինի նրա մեջ քաշել 4 շարք, 5 շարք կամ 6 շարք, նայած թե ջրելու հարմարությունն ինչպես է:

Ցանելու համար մարդի յերկարությամբ պետք է քաշել իրարից 20 սմ. հեռավորություն ունեցող փոքրիկ ակոսներ: Այս ակոսների խորությունը պետք է լինի 4-ից մինչև 5 սանտիմետր: Այսպիսի ակոսները հեշտությամբ քաշվում են սրածայր փայտեքով: Փոքրիկ ակոսները քաշելուց հետո մարդերը պետք է բաժանել ցանողների մեջ և ցանել:

Յուրաքանչյուր ցանող պետք է ցորենի հատիկներ

բը հողը գցի և ծածկի: Կարելի չե գործն այնպես կազմակերպել, վոր հողը գցած հատիկները վոչ թե ցանողը ծածկի, այլ մեկ ուրիշը:

Առանձին ուշադրութիւն պետք է դարձնել, վորպէսզի մարդերի մեջ քաջված փոքրիկ ակոսները ծուռումուռ չլինեն և նրանց միջև պահպանվի 20 սմ. տարածութիւն: Միաժամանակ ուշադրութիւն պետք է դարձնել, վորպէսզի հատիկների հեռավորութիւնը միմյանցից լինի 15 սմ.: Յանողներին պետք է վարժեցնել, վորպէսզի նրանք կարողանան արագ աշխատելու հետ միասին պահպանել այդ հեռավորութիւնը:

Ներսորտային խաչաձեւումից ստացած սերմացույցի (ՆՄՈ—0) առաջին տարվա ցանքը պետք է մշակվի բանջարանոցային կուլտուրայի նման: Գորենի շարքերի արանքը պետք է մշակել ձեռքով (հողուրազով, թոխով): Այնպես պետք է անել, վոր ցանքի մեջ վոչ մի մորխտու չլինի: Ծարքերի արանքը պետք է միշտ փորացրած լինի: Յանքը ջրելուց հետո, հենց վոր հողը մի քիչ ցամաքեց ու հնարավոր յեղով ցանքի մեջ մտնել, պետք է հողի յերեսը փխրացնել: Հողի փխրացումն այնքան խորը չպիտի կատարել, վոր հողուրազի կամ թոխի բերանը հասնի ցորենի բույսի արմատներին և վնասի նրանց:

Առանձին ուշադրութիւն պետք է դարձնել ներսորտային խաչաձեւված սերմացույցի ցանքի զոտսորտութեան վրա: Յանքի հասունացման շրջանում պետք է ուշադիր կերպով դիտել ցանքը, և յեթե կան զանազան խառնուրդներ, հեռացնել: Որինակ, յեթե ցանքը «Սպիտակահատի» ցանք է, բայց մեջը կան «Դեղփի» բույսեր, ապա այդ բույսերը պետք է հեռացնել: Իսկ յեթե ցանքը «Դեղփի» ցանք է, բայց մեջը կան «Սպիտակահատի» բույսեր, ուրեմն պետք է հեռացնել «Սպիտակահատի» բույսերը:

Եթե ցանքի անդատորութիւնը հետևանք է այն բանի, վոր ներսորտային խաչաձեւումն անց է կացվել պոպուլացիայի մեջ, ապա այդ դեպքում կարիք կա ցանքը մաքրել խառնուրդներից:

Ներսորտային խաչաձեւած սերմացույցի ցանքն առաջին տարում պետք է մաքրել նաև քարամրիկից և փոշեմրիկից: Այս աշխատանքը հնարավոր է հեշտութեամբ կատարել, քանի վոր ցանքը մեծ չե և, բացի այդ, ցորենի բույսերն աճում են կանոնավոր շարքերով: Պետք է ուշադիր կերպով դիտել այդ շարքերը և, յեթե կան քարամրիկով ու փոշեմրիկով վարակված հասկեր, պոկել ու դեն գցել:

Փոշեմրիկով վարակված հասկերը պետք է հեռացնել, հենց վոր այդ հասկերը յերեւում են: Իսկ այդ հասկերը յերեւում են ցորենի հասկակալելու ժամանակ: Ուրեմն, ցորենի հասկակալելու ժամանակ մի քանի անգամ պետք է դիտել ցանքը և փոշեմրիկով վարակված հասկերը հեռացնել:

Փոշեմրիկով վարակված հասկերը չի կարելի պոկել ու թափել, այլ պետք է վառել կամ թաղել, այլապես նրանք կշարունակեն վարակել առողջ հասկերը: Պետք է հիշել, վոր ինչքան շուտ հեռացվեն փոշեմրիկով հիվանդ հասկերը, այնքան քիչ կտարածվի այդ հիվանդութիւնը: Կրկնում ենք՝ փոշեմրիկով հիվանդ հասկերը հենց վոր սկսեցին դուրս գալ տերեւվաբնից, պետք է անմիջապէս հեռացվեն:

Քարամրիկով հիվանդ բույսերը լավ յերեւում են ցորենի մոմի հասունացման շրջանում: Ուրեմն, այդ ժամանակ էլ պետք է ցանքը գտել քարամրիկով հիվանդ հասկերը հենց վոր սկսեցին դուրս գալ տերեւամրիկով հիվանդ բոլոր բույսերը, ապա այդ ցանքի տված սերմացուն կարելի չե չախտահանել, բայց յեթե

ցանքի մեջ մնացին քարամրիկով հիվանդ հասկեր,
տալա սերմացուն պետք է անպայման ախտահանել:

Գարձյալ հիշեցնենք, փոք ներսորտային խաչածե-
փած սերմացույի ցանքը կարելի է զտել միայն բազ-
մացման առաջին տարում: Հետագա տարիներում այդ
բանը հնարավոր չէ, և յեթե ցանքի մեջ յերեվում է
քարամրիկ, ապա պետք է ստացված սերմացուն ախ-
տահանել, իսկ յեթե յերեվում է փոշեմրիկ, պետք է
կատարել սերմացույի տերմիկական ախտահանում:

Պատ. խմբագիր Գ. Բարսոնյան
Տեխ. խմբագիր Վ. Մանուկյան
Սրբագրիչ Հ. Մանուկյան
Գոնար. սրբագրիչ Ռ. Տանյան

Հանձնված է շարելու 2 մարտի, 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 10 մայիսի 1939 թ.
Գլավիտի վարչություն 11006 Հրատ. № 25
Պատվեր № 589 Տիրամ 4000
Թղթի չափը 72x105 /₃₂, 4000

Գ ի ն ր Ո ս ո ս ր լ ի

ՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ

1939

ԼԵՆԻՆԱԿԱՆ



ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տ Ո Ղ	Տ Պ Վ Ա Մ Ե	ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
5	10 վերևից	նա՛	նաև
5	11 »	բրոշյուրներ	բրոշյուրներ,
11	3 »	Նկ. 2 ցորենի բույսը Թափանձան հ:	Նկ. 1. Ցորենի բույ- սը Թփանձան հ:
19	6 ներքևից	և տվե՛	և ավելի լավ
59	1 վերևից	հը 100-ից	հը 100-ից

« Ազգային գրադարան



NL0293316

449

18288

ФРСС 1 П.

В. ГУЛКАНЯН
ВНУТРИСОРТОВОЕ
СКРЕЩИВАНИЕ
ПШЕНИЦЫ
Издание Армфан
Ереван 1939 г.